Ազգ

AZG
armenian newspaper

Դեկտեմբեր 4. 1991
Չորեքշաբթի
եռօրեայ թերթ,
Ա տարի, թիւ 84
գինը՝ 30 կ.

դասիչ՝ 69149
հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Ստեփանակերտում հաց չկա

Արդեն երրորդ օրն է, ինչ Ստեփանակերտում հաց չկա: Պարենատունը հայտարարել է, որ առանց ընդհարումների անհնար է զինվորների համար հաց տեղափոխել Աղդամից Ստեփանակերտ:

Քաղաքի երջակայքում նկատվում են օմոնականների կուտակումներ: ԽՍՀՄ ներքին զորքերի զինվորական առանց այն էլ սահմանափակ անձնակազմը նվազում է զորացրման հետեւանքով: Դեկտեմբերի 2-ին, ժամը 16.30-ից մինչեւ ութ գիշեր աղբեջանցիները, օգտվելով մառախուղից եւ գիշերային խավարից, Շուշիի կողմից, 40-ից ավելի «Ալազան» հրթիռներով զննդակոծել են Ստեփանակերտը: Նախնական տվյալներով, զոհվել են չորս հոգի՝ Հակոբ Հակոբյանը, Բենիկ Սարգսյանը, Վարդան Գաբրիելյանը եւ Ալեքսանդրը (ազգանունը հայտնի չէ), վիրավորվել են 8 հոգի, որոնցից երկուսը՝ Անդրեյ Սարգսյանը եւ Աստղ Հակոբյանը՝ բաց ծանր: Կան ավերված տներ:

Դեկտեմբերի 3-ի գիշերը, երբ Ավդոռ գյուղը երկարատեւ զնդակոծվել է կրակակետերից, հայկական կողմը պատասխանել է լռեցնելով հակառակորդներին: Մանրամասնությունները հայտնի չեն: ■

Գումարվեց ՀՌԱԿ-ի Առաջին հանրապետական պատգամավորական ժողովը

Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում օրեցօր արմատավորվում է բազմակուսակցական համակարգը: Ղարաբաղյան շարժման եւ Հայաստանում ժողովրդավարական գործընթացների շնորհիվ ձեւավորվել են բազմաթիվ կուսակցություններ եւ քաղաքական-հասարակական կազմակերպություններ, վտարանդիությունից հայրենիք են վերադարձել հայ ազգային կուսակցությունները:

Պատմական նշանակության այս տեղաշարժերում Հայաստանում ժողովրդավարության եւ ազատականության գաղափարախոսության վերածնունդն էր նախաձեռնել Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր խորհուրդը, որը կարճ ժամանակում կազմակերպական կառույցով էր օժտել գաղափարական այն մբտածողությունը, որն ավելի քան 70 տարի արտասահմանում աննահանջ կերպով կրել էր ՌԱԿ-ը:

Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության առաջին հանրապետական պատգամավորական ժողովի ընթացքում, որը տեղի ունեցավ նոյեմբերի 31 – դեկտեմբեր 1 օրերին, Երեւանում, հանրապետության բազմաթիվ քաղաքներից ու շրջաններից ժամանած պատգամավորները քննարկեցին կուսակցության ծրագրի, կանոնադրության ու քաղաքական պլատֆորմի հիմնադրույթները ու սկզբունքները: ՀՌԱԿ-ի առաջին հանրապետական պատգամավորական ժողովը, հիմք ընդունելով ծրագրի ներկայացված նախագիծը, խմբագրական հանձնաժողովին հանձնարարեց լրամշակել այն եւ կարճ ժամկետում ներկայացնել վերջնական որդեգրման: Հանրապետական պատգամավորական ժողովը երկօրյա քննարկումներից հետո ընդունեց՝ նախապես եղած առաջարկությունների հիման վրա խմբագրական հանձնաժողովի պատրաստած կանոնադրությունը:

Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության առաջին հանրապետական պատգամավորական ժողովը, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեց ՀՌԱԿ-ի հանրապետական վարչություն, որն իր հերթին նախագահ ընտրեց Ռուբեն Միրզախանյանին: Հանրապետական պատգամավորական ժողովը որոշեց կարճատեւ ընդմիջումից հետո շարունակել իր աշխատանքները, կուսակցության քաղաքական պլատֆորմի վերջնական ձեւավորման, Արցախի, աղետի գոտու եւ Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքականության առնչվող հիմնահարցերի քննարկման համար: ■

Շնորհավորում ենք Ուկրաինային

ասում է Հայաստանի խորհրդարանի փոխնախագահը

Նախ պետք է շնորհավորել Ուկրաինայի ժողովրդին, որը ժողովրդավարության պայմաններում կարողացավ արտահայտել անկախության իր կամքը,- երեկ մեր թղթակցին ասաց Հայաստանի խորհրդարանի փոխնախագահ Բաբկեն Արարքցյանը: -Սա եւս մեկ անգամ աղացուցում է, որ անկախություն ձեռք բերելու համար պետք են լուրջ իրավական հիմքեր, ինչպիսիք, օրինակ, ստեղծվել էին Հայաստանում:

Ինչ վերաբերում է անկախության ճանաչմանը, ապա համոզված եմ, որ այն հանրապետությունները, որոնք այդպիսի լուրջ հիմք են ստեղծել, միեւնույն է, վաղ թե ուշ պիտի ճանաչվեն աշխարհի կողմից:

Մի փոքր սխալ է հասկացվում Ամերիկայի կողմից Ուկրաինայի անկախության ճանաչման հարցը: Այստեղ էլ կան որոշ նախապայմաններ՝ կապված եւ միջուկային զենքի տնօրինման, եւ բանակի, եւ Հելսինկյան պայմանագրերի պարտավորությունների կատարման հետ: Եւ դա բնական է, քանզի երբ որեւէ հանրապետություն ուզում է միանալ քաղաքակիրթ հանրությանը, ապա պետք է պահպանի համաշխարհային նորմերը, որոնցի բացառվեն այնպիսի երեւույթներ, ինչպիսիք տեղի ունեցան այսպես կոչված սոցիալիստական համակարգի փլուզումից հետո, քաղաքացիական պատերազմ Հարավսլավիայում, տնտեսական եւ սոցիալական դժվարություններ Գերմանիայի վերամիավորումից հետո եւ այլն:

Նման հարցադրումներ սպասում են եւ մեզ: Էական հարցերից մեկը պիտի լինի քաղաքական կայունությունը Անդրկովկասում:

Ես կարծում եմ, որ մինչեւ չաղահովվի քաղաքական կայունություն, մինչեւ չստեղծվի իսկապես ժողովրդավարական հասարակարգ, որոնց հիմքերն, ի դեպ, մենք արդեն դրել ենք, աշխարհը հակված չի լինելու ճանաչել մեր անկախությունը:

Իսկ կայունությունը ձեռք է բերվում բանակցությունների ճանապարհով, որի կողմնակիցները մեծապես եղել եւ մնում են Հայաստանի իշխանությունները,- ավարտեց իր խոսքը փոխնախագահը: ■

Իրանը պատրաստ չէ ճանաչել Հայաստանի անկախությունը

Այսպես հայտարարեց երեկ երեկոյան մամլո ասուլիսում Երեւանի քաղաքապետ Համբարձում Գալստյանը, որը նոր էր վերադարձել Իրանից, որ գտնվում էր *«Մուսաֆագան եւ Ջամբազան»* ֆոնդի հրավերով: Նա նշեց, որ հանդիպումներ է ունեցել վերը նշված ֆոնդի կառավարիչ Մոհսեն Ռաֆիդդուստի, Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահիզիի, Իրանի գլխավոր դատավորի տեղակալ Բաղամջանի, հայ համայնքի ներկայացուցիչների, ազերիների հոգեւոր առաջնորդ Այաթոլլահ Մալաքութիի հետ: Քննարկվել են հայ-իրանական, հայ-ադրբեջանական հարաբերությունները: Քաղաքապետը նշեց, որ Իրանը անհանգստացած է Ադրբեջանի եւ Թուրքիայի մերձեցման հեռանկարով: Իրանը պատրաստ է Հայաստանին ցույց տալ բազմաբնույթ տնտեսական օգնություն, իրատապատություն բացել Երեւանում: Իրանն առայժմ պատրաստ չէ ճանաչելու Անդրկովկասի որեւէ հանրապետության անկախությունը: Քաղաքապետը եղել է Թավրիզ, Ուրմիա, Սղանան քաղաքներում: Այցի ընթացքում քննարկվել են նաեւ Հայաստան-Իրան կամրջի, հեռախոսային կապի, ինչպես նաեւ գազամուղի անցկացման հարցերը: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Հայաստանում համատեղ ձեռնարկություններ բացելու, 40 մլն. ռուբլու լայն սպառման մի ապրանք փոխանակելու վերաբերյալ: ■

870 հազարանոց թուրքական բանակը դառնում է 470 հազարանոց

«Միլլիյեթ»ի նոյեմբերի 25-ի համարում Նիլուֆեր Յալզընը Անկարայից տեղեկացնում է. «Թուրքիայի ընդհանուր զորքերի գլխավոր հրամանատարությունում այս օրերին ավարտվում են այն աշխատանքները, որով մեծ փոփոխություններ են պատրաստվում բարական բանակում: Նախատեսվում է կրճատել պարտադիր ծառայության ժամկետը եւ երեք տարվա ընթացքում աստիճանաբար 50 տոկոսով կրճատել բանակի թվակազմը: Այսպիսով, մինչեւ 1994 թվականը թուրքական ընդհանուր զինյալ ուժերի թիվը 870 հազարից կհասնի 470 հազարի, ցամաքային ուժերը 350 հազարի, օդային եւ ծովային ուժերը միասնաբար 120 հազարի:

Այս առիթով պատասխանելով լրագրողի հարցերին, Թուրքիայի սպայակույտի հատուկ պլանավորման նախագահ, զորավար Իլհան Քըլըչն ասաց, թե «ՆԱՏՕ-ի վերջին գագաթաժողովում հայտնի դարձավ, որ Եւրոպայի պաշտպանության գործում հնարավոր չէ անտեսել Թուրքիայի դերը: ՆԱՏՕ-ի անդամ երկրների դերի վերանայումից հետո Թուրքիան դադարում է ՆԱՏՕ-ի «հարավ-արեւելյան թեւի» երկիր լինելուց եւ դառնում է «ճակատային»: Ուրեմն, Թուրքիան պարտավոր է ունենալ ստատեգիական նոր հորիզոններ: ՆԱՏՕ-ի նոր ծրագրերը կարեւորություն են տալիս արագ եւ շարժուն ուժերին եւ, որպես հարավային կարեւոր կետ, այդ դերը վստահվում է Իտալիային այնտեղ ստեղծելով զինվորական գլխավոր շտաբ: Թուրքիան այս գործին իր մասնակցությունն է բերում զինվորական մի ջոկատ տրամադրելով վերոհիշյալ շտաբին»: Զորավար Քըլըչն ավելացնում է, թե, համաձայն ՆԱՏՕ-ի ծրագրերի, այդ ուժերը միայն պատերազմական դրության դեպքում են դառնում հարձակողական: «Եւրոպան այժմ ձգտում է զինաթափվել: Բայց դա ոչ թե զենքերը ոչնչացնելու, այլ նվազեցնելու ձգտում է: Գոյություն ունեն նվազագույն նորմեր: Զենքերը կրճատվում են այն երկրներում, որ նրանց թիվը գերազանցում է ընդունված հանակը: Թուրքիայի ունեցած ռազմական միջոցները բավականին հին են, նրանց քանակը ցածր է նորմից: Ինչ վերաբերում է ֆինանսավորման աղբյուրներին, ՆԱՏՕ-ի անդամ երկրները խոստացել են իրենց կրճատած զենքի մի մասը հատկացնել Թուրքիային»: Այսպիսով, Թուրքիան, որի բանակը ՆԱՏՕ-ի անդամ երկրներից ամենամեծ թվակազմն ունի, ավելի մեծ նշանակություն է տալիս զինամթերքին, քան մարդկային ուժին: ■

Կանադան եւ Լեհաստանը ճանաչում են Ուկրաինայի անկախությունը

Դեկտեմբերի 2-ի ուշ երեկոյան Կիեւում Կանադայի գլխավոր հյուպատոս Ն. Գայովսկին Ուկրաինայի նորընտիր նախագահ Լեոնիդ Կրավչուկին հանձնեց Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիի՝ Ուկրաինայի անկախությունը ճանաչելու մասին հայտարարությունը:

Լեհաստանի կառավարությունը որոշում ընդունեց Ուկրաինայի հետ դեսպանատների մակարդակով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին: Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Ա. Զլենկոյին հղած հայտագրով Ուկրաինան ճանաչվում է անկախ պետություն:

ՄԱԿ-ին կից Ուկրաինայի մշտական ներկայացուցիչ Գենադի Ուդովենկոն հայտարարեց, որ կձգտի հանդիպել ԱՄՆ-ի նախագահին համաուկրաինական անկախության հանրաքվեի արդյունքները պաշտոնապես հաղորդելու նպատակով:

Ռուսաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Սերգեյ Ֆիլատովը «ԻԴ»-ին տված հարցազրույցում համոզվածություն հայտնեց, որ Ռուսաստանի կողմից Ուկրաինայի անկախության ճանաչումը «չի կարող չկայանալ»: Նա նշեց նաեւ, որ «ինտեգրման պետությունների միության ստեղծումն անհնար է ինչպես առանց Ուկրաինայի, այնպես էլ՝ առանց Ռուսաստանի»: Ս. Ֆիլատովը ավելացրեց, որ Ռուսաստանի եւ մյուս հանրապետությունների միջեւ հարաբերությունների հետագա զարգացումը կընթանա, ըստ երեւույթին, համագործակցության մասին երկկողմանի պայմանագրերի կնքման ճանապարհով:

Դեկտեմբերի 2-ին ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը հեռախոսով շնորհավորեց Ուկրաինայի եւ Ղազախստանի նորընտիր նախագահներին: Զրույցների ժամանակ Մ. Գորբաչովը հույս հայտնեց, որ նոր միութենական պայմանագիր կնքելու հեռանկարները բավականին իրական են:

ԽՍՀՄ նախագահի այդ կարծիքի հետ համաձայն է նաեւ Միջպետական տնտեսական կոմիտեի նախագահ Իվան Սիլաեւը: «Անկախության մասին հայտարարեցին շատ հանրապետություններ: Միայն Ռուսաստանը դեռ մնում է իրավաբանորեն կախյալ: Այսպիսով, շատ բան է կախված այն բանից, թե ինչպիսի քայլեր կձեռնարկվեն հետագայում», ասաց Ի. Սիլաեւը: ■

Պատրաստ է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ պայմանագրի նախագիծը

Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ միջպետական հարաբերությունների հիմունքների մասին պայմանագրի նախագծի նախապատրաստումն ավարտված է: Փաստաթղթի տեքստը համաձայնեցված է Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Այդ մասին «ԻԴ»-ին տված հարցազրույցում հայտարարեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւը: Նա նշեց, որ առայժմ վաղաժամ է հրապարակել պայմանագրի նախագծի մանրամասները:

Ֆ. Շելով-Կովեդյաեւի խոսքերով, հաշվի առնելով Կովկասում ստեղծված իրավիճակը, կողմերը այդ փաստաթուղթը կքննարկեն մոտ ժամանակներս: ■

Դարձյալ ուղղաթիռի աղետի մասին

Դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի հեռուստատեսության «24 ժամ» հաղորդման ժամանակ ներկայացվել է հարցազրույց Աղդամի երջանի Մարջալա գյուղի հովիվ Շաֆա Բաբաեւի հետ, որը, պարզվում է, պատահականորեն ականատես է եղել ուղղաթիռի վթարին: Նրա խոսքերով, ինքը գտնվել է պատահարի վայրից ոչ հեռու եւ տեսել է ցածր թռչող ուղղաթիռը: Այնուհետեւ անպատասխանորեն կրակ է բացվել, եւ ուղղաթիռը սկսել է վայր ընկնել: Մի որոշ ժամանակ հետո նա նկատել է վառվող ուղղաթիռի կողմը ուղղություն վերցրած բեռնատար ավտոմեքենա, որից հետո վերսկսվել են կրակոցները: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Բեյրութում ազատ արձակվեց 5 տարի առաջ պրոտեստանյան առեւանգիչների կողմից պատանդ վերցված Մ. Նահանգների քաղաքացի Ջոզեֆ Սիսիպիոն: Շիա մի այլ կազմակերպություն հայտնեց, թե պատրաստվում է 48 ժամվա ընթացքում ազատ արձակել մի այլ ամերիկացու՝ Ալան Սթինին: Առեւանգիչների ձեռքում են գտնվում երկու այլ ամերիկացիներ, երկու գերմանացիներ եւ մի իտալացի, որի ճակատագիրն անհայտ է մնում:

Իսրայելը անմիջապես ազատ է արձակել 25 արաբ բանտարկյալների այն բանից հետո, երբ իմացել է Լիբանանի շիա առեւանգիչների՝ ամերիկացի պատանդ Սիսիպիոյի ազատ արձակման մտադրության մասին:

Մերձավոր Արեւելքի խաղաղության համաժողովի երկրորդ հանգրվանի բանակցություններին մասնակցելու համար Վաշինգտոն են մեկնել Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի եւ Պաղեստինի պատվիրակությունները, մինչ Իսրայելը պնդում է, թե իր պատվիրակությունը Վաշինգտոն կժամանի առաջիկա շաբաթ: ■

digitised by A.R.A.R.@

Ոչ պետական, խառը ընկերություններ

Դարձյալ սեփականաաբնորհման հետ կապված խնդիրներ

Նոյեմբերի 19-ին մամուլում հրապարակվեց Նախարարների խորհրդի որոշումը *«Պետական ձեռնարկությունների հիման վրա ոչ պետական եւ խառը ընկերությունների ստեղծման ժամանակավոր կարգի մասին»*: Այս փաստաթղթով, ըստ էության, կանաչ լույս է վառվում պետական միջին եւ խոշոր ձեռնարկությունների սեփականաաբնորհման առջեւ (խառը ընկերությունների ստեղծման դեպքում տեղի է ունենում մասնակի սեփականաաբնորհում կամ, որ ավելի ճիշտ է, աղատեսականացում): Առաջին հայացքից թվում է, թե սեփականաաբնորհումն իրականացվելու է ձեռնարկությունների «ինքնագնման» միջոցով, տվյալ ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի կողմից: Պետական ձեռնարկությունները աշխատավորական կոլեկտիվներին սեփականաաբնորհելու նպատակահարմարությունը այլ հարց է, սակայն որքանո՞վ դա հնարավոր է սույն որոշմամբ:

Գաղտնիք չէ, որ սեփականաաբնորհման արդյունավետությունը մեծապես կախված է այն կազմակերպող պետական մարմնի աշխատանքից, նրա կարգավիճակից, իրավասություններից, աշխատողների իրազեկվածությունից: Ըստ այս որոշման, սեփականաաբնորհման կազմակերպման գծապատկերն ունի հետեւյալ տեսքը. աշխատավորական կոլեկտիվի որոշում-սեփականաաբնորհման հասուկ հանձնաժողովի համաձայնություն - Նախարարների խորհրդին առընթեր տնտեսական բարեփոխումների պետական հանձնաժողովի կողմից ժամկետների եւ կարգի որոշում -Նախարարների խորհրդի որոշում-Նախարարների խորհրդին առընթեր պետական ունեցվածքի տնօրինման եւ աղատեսականացման կոմիտեի կողմից գույքագրում:

Ինչպես տեսնում ենք, գործընթացը բազմափուլ է, անխուսափելիորեն բյուրոկրատական, սակայն ամենամեծ թերությունը պատասխանատու կենտրոնի բացակայությունն է: Կարեւորագույն օղակը այդ գծապատկերում, անտարակույս, տնտեսական բարեփոխումների պետական հանձնաժողովն է (ժամկետների եւ կարգի որոշումը), որը, կարելի է եզրակացնել, հեռանում է իր հիմնական գործառույթից՝ տնտեսական քաղաքականության հիմունքների եւ օրինագծերի մշակումից, եւ այսուհետ պետք է զբաղվի յուրաքանչյուր պետական ձեռնարկության սեփականաաբնորհման հարցերով: Իսկ դա բավականին աշխատատար գործընթաց է, քանի որ յուրաքանչյուր ձեռնարկություն պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Հիմնավոր չի թվում սեփականաաբնորհման հատուկ հանձնաժողովի ստեղծումը միայն թույլ տալու կամ չտալու համար. Նախարարների խորհուրդը կարող է հրապարակել այն ձեռնարկությունների ցանկը, որոնք առայժմ ենթակա չեն սեփականաաբնորհման:

Մյուս կարեւոր հարցը. պարզվում է, որ պետական ունեցվածքի գույքագրումը անց է կացվելու ընկերության ստեղծումից հետո միայն, այսինքն՝ աշխատավորական կոլեկտիվները նախապես չեն կարող որոշել նորաստեղծ ընկերության կանոնադրական ֆոնդում բաժնեմասի իրենց չափը: Ստացվում է, որ նրանք պետք է գնեն այն գույքը, որն իրենց հայտնի չէ: Այնքան էլ հասկ չէ տրված ձեռնարկության հատուկ ֆոնդերի միջոցներից բացի այլ միջոցների օգտագործման հնարավորությունը եւ կարգը (անձնական խնայողություններ, վարկեր), ինչպես նաեւ աշխատավորական կոլեկտիվի առանձին անդամների կողմից ընկերության բաժնեմասի գերակշիռ մասին տիրանալու թույլատրելիությունը: Սա սկզբունքային հարց է եւ չի կարող բողոքել միայն պետական հանձնաժողովների իրավասությանը: Բնական է, որ եթե նոր ընկերությունը ստեղծվելու է աշխատանքային կոլեկտիվի առնվազն 50 տոկոսի համաձայնությամբ, հետեւաբար, այդ 50 տոկոսի պահանջները նորաստեղծ ընկերության բաժնեմասեր կամ բաժնետոմսեր եւ այլ արժեթղթեր ձեռք բերելու համար ձեռնարկության հատուկ ֆոնդերի միջոցների անբավարարության դեպքում (որն ամենահավանականն է ներկա ծանր ֆինանսա-տնտեսական պայմաններում) նոր ընկերության ստեղծում հազիվ թե կայանա, հաշվի առնելով նաեւ գույքագրման հետ կապված անորոշությունը: Եզրակացությունը միանշանակ է. սույն որոշումը կիրառելի կլինի միայն մի քանի ձեռնարկությունների համար, եւ առաջին հերթին՝ առավելապես սվերային հարաբերություններով աշխատողների: Չնայած այստեղ առկա է մի կարեւոր պահ. շատ ցանկալի է պետական ձեռնարկության կարգավիճակի փոփոխման մասին իսկ, բեկուզ եւ բաժնեմասի կամ բաժնետոմսերի գերակշիռ մասը բողնվի պետության տրամադրությանը: Այսինքն՝ խառը ընկերությունների ստեղծումը կամ, որ նույնն է՝ պետձեռնարկությունների աղատեսականացումը: Այդ դեպքում պետական բաժնեմասերի եւ բաժնետոմսերի իրացումը երկրորդական է: Կանոնում միայն ժամանակի հարց է: Հետեւաբար, շատ կարեւոր է աշխատավորական կոլեկտիվներին ըստ ամենայնի շահագրգռելը խառը ընկերությունների ստեղծման համար, որն էլ հենց բացակայում է այս որոշումում:

Ամենակիրառական եւ, կարելի է ասել, շրջադարձային նշանակություն ունեցող տնտեսական հարաբերությունների անցնելիս կարող է հանդես գալ հաշվարկային հաշիվ չունեցող առանձնացված ստորաբաժանումների հիման վրա նոր ընկերությունների ստեղծման հնարավորությունը, չնայած դա էլ տրված է որոշ վերապահումով: Էականը այստեղ ոչ միայն սեփականաաբնորհման կամ աղատեսականացման փաստն է, որքան տնտեսության աղամենաաբնորհումը գիգանտ ձեռնարկությունների եւ միավորումների մասնատման միջոցով: Այդպիսի ոչ մեծ, տնտեսական պայմաններին հարմարվելու ավելի ընդունակ ընկերությունների ստեղծումը լուրջ խթան կարող է հանդիսանալ տնտեսական առողջ մրցակցության, կոոպերացիոն կապերի կատարելագործման, դեպի ներքին շուկան ընդպատակաուղղված արտադրությունների զարգացման համար:

Հաշվի առնելով փորձը, որը կկուտակվի այս որոշման համաձայն, սեփականաաբնորհումը եւ աղատեսականացումը անցկացնելիս, կարելի է հուսալ, որ Գերագույն խորհրդի կողմից ընդունվելիք համապատասխան օրենքում կմշակվեն ավելի արդյունավետ մեխանիզմներ:

Սամվել ՍԱՀԱԳՅԱՆ
Տնտեսագետ

«Անտերին գելն ա տարել...»

Այո, մեր հարազատ խորհրդարանում չգտնվեց մեկը, որ «բարեխոսի խեղճ հուսարի համար»:

Կառավարական նախագիծ ներկայացնողները եւ պատգամավորները սրբ խաչաձեւեցին բնության պահպանության, սպորտի եւ այլ բնագավառների ինքնուրույնության ու պետական կառուցվածքներում իրենց բարձր կարգը պահպանելու կամ բարձրացնելու հարցում, սակայն ոչ մի պատգամավոր կամ կառավարական բարձրագույն պաշտոնյա իրեն նեղություն չը-պատճառեց հիշելու մեր ժողովրդի ստեղծած եզակի արժեքների մասին, որոնք այսօր, թերեւս, այն սակավաթիվ հարստություններից են, որոնցով կարող ենք հպարտանալ եւ բացերես ներկայանալ քաղաքակիրթ աշխարհին:

Մեր մշավորական պատգամավորները, արհամարհելով պատմաճարտարապետական հազարավոր հուշարձանների պահպանության, վերականգնման եւ պրոպագանդման գործը՝ «մատնեցին» իրենց, դրսեւորելով արժեքների գնահատման «յուրօրինակ» կարողություն:

Անշուշտ, կառավարման համակարգում անկարեւոր բնագավառ չկա, սակայն մի՞թե մեր նախնիների թողած ժառանգությունը նմանօրինակ վերաբերմունքի էր արժանի եւ մի՞թե նոր համակարգի նախագիծը կազմելիս հարկ չէ՞ր գտնե խորհրդակցել այդ ասպարեզի ներկայացուցիչների հետ, թեկուզ ժամանակին տեղյակ պահվեր, թե «ինչ է գալու նրանց գլխին»: Միգուցե հարցերի լուծման «վարչահրամայական մեթոդների» դեմ այնքան պայքարեցինք, որ դրանց մերօրյա ներդրման կարիքն առաջացավ:

Ցավալի է եւ փաստ, որ կառավարական վերին էշելոններում եւ խորհրդարանում տեղյակ չեն կամ չեն ձգտում տեղյակ լինել, թե այս վերջին տարիներին ինչ բազմապիսի դժվարությունների հետ է բախվում Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության եւ օգտագործման Գլխավոր վարչությունը, որն իրականացնում է հանրապետության (ներառյալ նաեւ Արցախը եւ ներքին ըստիյուռը) բոլոր պատմաճարտարապետական ու մշակութային հուշարձանների պահպանության, վերականգնման գործը: Անիշխանության եւ հոգեկան այլասերվածության դրսեւորումները, օրենքի նկատմամբ վերին աստիճանի համահարանը եւ առկա օրենքների անկատարությունը, բազմաթիվ օբյեկտիվ գործընթացներ (հողի սեփականաշնորհում, հին գյուղերի վերականգնում եւ նորերի հիմնում, բնակարանային շինարարություն, հողամասերի հատկացում, կոոպերատիվ շարժման բուն, կյանքի բազմանգամյա թանկացում, դրամի արժեզրկում եւ վերջապես վճարման «խորհրդային» նորմեր ու կարգ) հաճախ փակուղու առաջ են կանգնեցնում այդ հիրավի համաժողովրդական, սակայն առաջին հերթին պետական գործի իրականացումը:

Եւ ահա այսպիսի պայմաններում, փոխանակ հզորացնելու, իրավական եւ վարչական առավել բարձր կարգավիճակ շնորհելու, վարչությունը կցում կամ ներառում են մի նախարարության (մշակույթի), որը ի ցավս մեր ժողովրդի եւ ի տարբերություն քաղաքակիրթ երկրների, երբեք պետության ուշադրության կենտրոնում, կամ թեկուզ ծայրում, չի եղել:

Դիմում եմ հանրապետության ղեկավարներին եւ խորհրդարանի պատգամավորներին. սխալ մի գործեք, հուշարձանների պահպանության եւ վերականգնման գործը մի երկրորդեք, այն մեր սերունդներին է հարկավոր:

Գ. ՍԱՐՅԱՆ

ՃԱՆՈՒՅՈՒՄ

Ազգային Միասնության Ուխտը, իբրեւ քաղաքական կազմակերպութիւն, լուծարուել է: Ուխտի ներկայացուցիչ Ռ. Համբարձումեանը այդ ոգիով յայտնեց, որ կազմակերպութիւնը հիմնուել է 1989 թ. ապրիլի 24-ին, հիմնական նպատակը Հայաստանի անկախութեան վերականգնումն էր, հայոց ազգային կուսակցութիւնների, մասնաւորաբար Հ.Յ.Դաշնակցութեան հայրենամուտի համար ճամփայ բացելը, ազգային գաղափարների հանրաւորումը, համահայկական խորհրդարանի եւ կառավարութեան ստեղծումը: Այդ նպատակով Ուխտը 1989 թ. մայիսի 7-ին հիմնեց նախախորհրդարանը, 1990 թ. յունուարի 16-ին՝ Համահայկական պայքարի միացեալ ճակատը նախաձեռնող միութիւն, կարեւոր դեր ունեցաւ ներկայ վարչախմբի հանդէպ ընդդիմութեան ծեւավորման գործում:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

Շեւարդնաձեն եւ Բժեզինսկին կանխագուշակում են վաթարագույնը

Արտաքին հարաբերությունների նախարար Էդուարդ Շեւարդնաձեն եւ Կոլումբիայի ու Ջորջթաունի համալսարանների պրոֆեսոր, Ազգային անվտանգության գծով ԱՄՆ-ի նախագահի նախկին խորհրդական Զբիգնեւ Բժեզինսկին, որը մտնում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքական խորհրդի քաղաքագետների խմբի մեջ, կանխատեսում են իրադարձությունների դրամատիկ զարգացում նախկին ԽՍՀՄ տարածքում: Ինչպես նշվում է նոյեմբերի 30-ին Արտաքին հարաբերությունների նախարարությունում տեղի ունեցած նրանց հանդիպման վերաբերյալ հաղորդագրության մեջ, է. Շեւարդնաձեն գտնում է, որ հիմա ամենակարեւորն է փրկել ժողովրդավարական նվաճումներն ու երկիրը:

Զ. Բժեզինսկին Շեւարդնաձեի հետ բանակցությունների ժամանակ ԽՍՀՄ-ում ստեղծված իրավիճակն անվանեց «նախահեղափոխական», հաշվի առնելով չնախատեսված հետեւանքների վտանգը:

Համաձայն նույն աղբյուրի, երկու զրուցակիցները խոսում էին հավանական տարբերային հուզումների մասին, որոնք կառաջանան սովին եւ ցրտին զուգընթաց: է. Շեւարդնաձեն նշեց նաեւ այն բարդ իրավիճակը, որի մեջ են ԽՍՀՄ զինծառայողները, առաջին հերթին նրանք, ովքեր հեռանում են Մերձբալթյան պետություններից եւ նրանք, ովքեր ներկա պահին գտնվում են այն հանրապետություններում, ուր տեղի են ունենում սուր ազգային ընդհարումներ: Կողմերի կարծիքով, խոսքը գնում է շատ կարեւոր սոցիալական գործոնի մասին, որը կարող է ամենաարմատական կերպով ազդել երկրի ընդհանուր վիճակի վրա:

է. Շեւարդնաձեի եւ Զ. Բժեզինսկու շրջապատից հայտնի դարձավ նաեւ, որ բանակցողները «հիմնական ուշադրությունը» դարձրել էին Ուկրաինայի վրա, որի բաժանումը Միությունից, ըստ երեւույթին, մոտ ժամանակներս կդառնա իրականություն: Քանի որ իրադարձությունների զարգացումը տեղի է ունենում Միության բաժանման ուղղությամբ, աղա ինքնիշխան հանրապետությունների թեկուզ նորոգված քաղաքական միասնության վերականգնումը դառնում է ավելի անորոշ: Ավելին, ինչպես պարզ է դառնում Բորիս Ելցինի հայտարարությունից, Ռուսաստանը մտադիր չէ ստորագրել ինքնիշխան պետությունների պայմանագիրը, եթե նրան չմիանա Ուկրաինան:

է. Շեւարդնաձեի եւ Զ. Բժեզինսկու արտահայտություններն ու դիրքորոշումը հետաքրքրական են, քանզի այս քաղաքագետները հայտնի են իրենց ճիշտ կանխագուշակումներով: Ինչպես գտնում է Բժեզինսկին, այն, ինչ տեղի է ունենում ԽՍՀՄ-ում հիմա, նա կանխագուշակել է դեռ երկու տասնամյակ առաջ: Ինչ վերաբերում է Շեւարդնաձեին, աղա խոսվության հավանականության մասին նա ասել էր դեռ անցյալ դեկտեմբերին: Բժեզինսկու հետ հանդիպման ժամանակ արտաքին հարաբերությունների նախարարը նշում էր, որ երկրում ստեղծված ներկա իրավիճակը նույնիսկ ավելի բարդ է, քան մինչ օգոստոսյան դեպքերը: ■

Ռուսաստանը թաքը դնում է ԽՍՀՄ ԱՀՄ ունեցվածքի վրա

Նոյեմբերի 28-ին տեղի ունեցած նիստում Ռուսաստանի կառավարությունը որոշում ընդունեց, որի համաձայն արտաքին հարաբերությունների նախարարության ամբողջ ունեցվածքը ԽՍՀՄ-ում եւ արտասահմանում, հանձնվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության «օպերատիվ վարչությանը»: Ինչպես Ռուսաստանի արտգործնախարարությունում բացատրեցին, չկան միութենական բյուջե եւ «արդյունավետ գործող կենտրոնական մարմիններ», «Միությունը միջոցներ չունի, իսկ Ռուսաստանն՝ ունի»: Այս պայմաններում Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը մտադիր է տնօրինել ԽՍՀՄ արտաքին հարաբերությունների նախարարության ունեցվածքը, ներառելով խորհրդային դեսպանատները:

Արտաքին հարաբերությունների նախարարության դիվանագետներից մեկի կարծիքով, այդ քայլը «դժվար կացության մեջ է դնում ինչպես միութենական արտաքին քաղաքական գերատեսչությանն ամբողջությամբ, այնպես էլ նրա ղեկավար էդուարդ Շեւարդնաձեին»: Դիվանագետը նշեց, որ Ռուսաստանի որոշումը «անսպասելի չէր Շեւարդնաձեի համար»: Նոյեմբերի 26-ի Պետխորհրդի նիստից հետո, որի ժամանակ ինքնիշխան պետությունների միության մասին պայմանագրի նախագիծը չէր ստորագրվել, նա պետք է իրեն հաշիվ տա, որ իրավիճակը չի նպաստում հանրապետությունների քաղաքական միությանը, եւ, հետեւաբար, միութենական դիվանագիտական ծառայությանը:

Դիվանագետի խոսքերով, «հավանական է Շեւարդնաձեն շտապեց, համաձայնելով գրավել նախարարի պաշտոնը մինչեւ Պետխորհրդի նիստը»: «Իսկ հիմա, երբ քաղաքական միության հեռանկարները շատ անիրական են, իսկ արտաքին հարաբերությունների նախարարությունը Ռուսաստանի արտգործնախարարության ֆինանսական կախման տակ ընկնելու վտանգի մեջ է, ի վերջո որեւէ մեկը ստիպված կլինի հեռանալ՝ կամ Անդրեյ Կոզիրեւը կամ էդուարդ Շեւարդնաձեն», ասաց դիվանագետը: ■

Սեւանում կանգնեցվել է տախտակների աշխատանքը

Հանրապետության համար ճգնաժամային այս իրադրության պայմաններում տագնապալի իրավիճակ է ստեղծվել նաեւ Սեւանի շրջանում: Խոսքը նորից վերաբերում է վառելիքի բացակայությանը: Ստեղծվել է մի խառնաշփոթ, ուր «ծնվում եւ վերաճում են» ձեռներեցներ, անկման եզրին են կանգնում ձեռնարկություններ: Շրջաններին վառելանյութի կանոնավոր բաշխում է կատարվում վերին մակարդակների կողմից, շատ լեզուների ասելով՝ «մարդկային վերաբերմունքի» դեպքում... Ինչպես ներկայացնում է Սեւանի քաղաքային ավտոձեռնարկության տնօրեն Հ. Ղազարյանը, հանրապետության ավտոտրանսպորտի վարչությունը մեկ օրվա համար շրջանին բաց է թողել 40 տոննա բենզին՝ 650-ի փոխարեն: Սա, ըստ նրա, միայն կամայականության արդյունք է, այլ ոչ թե վառելիք չլինելու հանգամանք: Պրն. Ղազարյանն ուղղակի ասաց, որ *«այս օրերի մրցավազքին դիմանալ չենք կարող, հիմա մենք բենզինի լիտրը ձեռք ենք բերում 2 ռուբլի 25 կոպեկով»*:

Ինչեւէ, դեկտեմբերի 1-ից քաղաքում դադարեցված է տախտակների աշխատանքը, եղած վառելանյութը տրվում է միայն հաց եւ ջերմաէլեկտրակայանները մազութ տեղափոխող մեքենաներին: Իսկ Սեւան-Երեւան ավտոմայրուղու Սեւանի տեղամասին զուգահեռ բացված մի նոր մասնավոր կետում բենզին է վաճառվում: ■

digitised by A.R.A.R.@

Կարդալով անվանի գիտնական Ռ. Իսխանյանի *«Խորհրդարանը փաստորեն մերժեց հայերենի պաշտպանության օրենքը»* հոդվածը (*«Հայաստանի հանրապետություն»*, 16 նոյեմբերի. 1991 թ.). եւ մտահոգվեցի. եւ զարմացա: Մտահոգվեցի այն պատճառով. որ մեզանում կան մարդիկ. որ դեռեւս չեն գիտակցում մայրենի լեզվի վճռական նշանակությունը ազգի հարատեւման ճանապարհին. զարմացա. որ նման օրենքը մերժվում է խորհրդարանի մեծամասնության կողմից:

Հայոց լեզվի մասին օրենքը պետք է ընդունվի

Թեեւ խմբագրությունը համաձայն չէ հեղինակի որոշ մտքերի հետ, սակայն սրանք երկարամյա մանկավարժի խոհերն են լեզվի օրենքի մասին, որ խորհրդարանը պատրաստվում է ընդունել:

Մեր մատենագրության եւ գեղարվեստական գրականության նշանաւոր հանդիսացող երկերում հայ ժողովրդի պատմությունը դրսեւորվում է որպես անկախության եւ ազատության համար մղվող պայքարի անընդմեջ ընթացք: Եվ այդ պայքարի մեջ մեր ժողովրդին մտահոգող առաջին հարցը եղել է լեզվի պահպանումը:

Պատահական չէ. որ դարերի ընթացքում բոլոր տիրապետողները. վերջին հարյուրամյակներում ռուսական կայսրությունը ձգտում էր իր լեզուն պարտադրել: 1917-20 թթ. հետո ռուսականացման արշավն ավելի խորացավ: Այդ քաղաքականության առաջին զոհերից մեկը դառնում էր մեր ժողովուրդը: Կարճ ժամանակամիջոցում Լենինի հրամանով Ռուսաստանում փակվեցին հայկական բոլոր կրթօջախները: Հերթը հասավ նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների հայկական դպրոցներին: Հարվածն ավելի ծանր էր Այրարատյանի հայաբաս քաղաքների ուսումնական հաստատությունների համար: Փակվեցին 76 հայկական դպրոցները. մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը. Բաքվի հայկական դրամատիկական հանրահայտ թատրոնը. տասնյակ թերթեր ու ամսագրեր. գրադարաններ եւ այլ օջախներ: Այսպիսով. Բաքվում. Կիրովաբադում (Գանձակ). Սումգայիթում. Մինգեչաուրում. Շեֆիում եւ այլ կենտրոններում մոտ կես միլիոն հայեր սկսեցին խոսել ռուսերեն եւ հեռանալ հայ արմատից: Գլուխը քարը. եթե դրանով ավարտվեր աղետը: Այն հասավ նաեւ Արցախ: Ստեփանակերտի II դպրոցներից միայն 5-ն էր հայկական. մանկական հիմնարկների մեծ մասը սկսեց գործել ռուսերեն: Ռուսական դպրոցներ բացվեցին Մարտակերտում. Ասկերանում. Մարտունիում. Հադրութում. Շուշիում. ուր սովորում էին միայն հայ երեխաներ:

Ռուսականացման քաղաքականությունն ավելի բացահայտ դարձավ կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Կ.Ռուրկովի ղեկավարման շրջանում: Հայոց լեզուն արհամարհվեց մարզային եւ քաղաքային աղարտներում: Աշխատանքի էին վերցնում միայն այն երիտասարդներին. ովքեր ունեին ռուսական կրթություն: Բազմիցս մեզ են մոտեցել հայկական բուհերը կարմիր դիպլոմով ավարտված երիտասարդներ եւ վիրավորանքը կոլ տալով հայտնել. որ. տեղ լինելով հանդերձ. իրենց չեն վերցնում. բացահայտ հայտարարելով. որ հայկական կրթությամբ կադրերի կարիք չի զգացվում:

Ամբողջ մարզում գործավարությունը տարվում էր ռուսաց լեզվով: Հանդիսավոր նիստերում դարաբաղցի կիսվորուհին անգամ ստիպված կարդում էր ռուսերեն կազմված ելույթը. վերջում զգացնելով իր ուսերից նեսվող ծանր բեռը: Եվ երբ որեւէ հայ մտավորական բողոքում էր նման երեւույթի դեմ. կամ հալածանքի էր ենթարկվում. կամ էլ լռեցնելու համար մասնացույց էր արվում Երեւանը. որ իբր այնտեղ եւս չափազանց բարձր է ռուսերենի հարգը: Համազգային այս ցավից մարդու սիրտը կրկնակի է կծկվում. երբ տեսնում է. որ պատասխանատու անձինք մասների արանքով են նայում հայոց լեզվի մասին օրենքին:

Կարող են գտնվել մարդիկ եւ առարկել լեզվի մասին օրենքի չընդունելը ցավ համարելու համար: Արձակագիր. լրագրող Մ. Տեր-Գուլանյանը խորհրդարանում քննարկվող լեզվի մասին օրենքը համարում է մի տեսակ հուսահաս ժողովրդի օրենք. ավելացնում. որ **«մի քանի տարի առաջ հուսահատվելու պատճառներ ունեինք. բայց հիմա մայրենի լեզուն պաշտպանելու հրաշալի մեխանիզմներ կան: Գրված է Հայաստանի հանրապետության պետական լեզուն հայերենն է. բոլոր գրագրությունները եւ այլն հայերեն են. էլ ինչ կարիք կա այդքան խորանալ մանրամասների մեջ. այդքան բվարկել...»** (*«Հայաստանի հանրապետություն»*, 15 նոյեմբերի. 1991 թ.): Լավ է. որ արձակագիրը լավատես է: Բայց մի բան պարտավոր ենք հանձն առնել. որ գոյացել է հայոց լեզվի հանդեպ արհամարհանք ունեցող. հոգեպես ազգայինից հեռացած հայերի մի բանակ. որ ամեն մի պատեհ առիթով պատրաստ է սուր բարձրացնել այն լեզվի դեմ. որով իր անունն է կրում ժողովուրդը եւ որով պիտի վավերացնի իր լինելությունը:

Ռ. Իսխանյանը տեղին ու ճիշտ է ընդգծում. որ լեզվի մասին օրենքի ընդունումը պարտադիր է փոքրիկ Հայաստանին: Չպետք է մտավախություն առաջացնի այն երեւույթից. որ Հայաստանում պաշտոնական անձանց մի զգալի մասը հայերեն վատ գիտի. որ գործում է ռուսախոս մտավորականների մի զգալի ջոկատ. որ բազմաթիվ երեխաներ առ այսօր արվորում են ռուսերեն. որ հանրապետություն են տեղափոխվել հազարավոր ռուսախոս մեր ազգակիցները: Հայոց լեզվի պահպանման հարցում պետք է շրջադարձային եւ կտրուկ օրենք: Ոչ մի հայ երեխա օտարալեզու դպրոց չպետք է գնա: Միաժամանակ նա պարտավոր է սովորել օտար լեզուներ: Դրա համար ընտրված են լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է կոնկրետ փախստական երեխաներին. նրանցից շատ-շատերը հաճույքով են լծվել հայերենին տիրապետելու գործին. իսկ փոքրիկներն արդեն մտածում եւ խոսում են մայրենի լեզվով: Այնպես որ. եթե որեւէ պատգամավոր կամ պաշտոնյա լեզվի օրենքին դեմ է արտահայտվում հիմք ընդունելով փախստականների ռուսախոսությունը. ապա նա սխալվում է: Ինչ վերաբերում է այն քաղվեցիներին. որ դիմադրում են հայկական կրթությանն ու հայոց լեզվին. ապա պարտավոր ենք համբերատարությամբ նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվության զգացումը: Հայաստանում. Արցախում եւ հայաբաս բոլոր շրջաններում հայ երեխաները պետք է ստանան հայկական կրթություն. դաստիարակվեն հայեցի:

Կատարյալ. լիարյուն մարդու համար իր հայրենի հողի վրա. իր մայր ժողովրդի գրկում ազգային լեզուն չիմանալը պետք է համարվի ամենամեծ թերությունն ու վիրավորանքը հենց իր հանդեպ: Ազգային լեզվի պահպանումը առանձին ծնողների խնամքը չէ. այն պետական գործ է: Մենք փոքրաթիվ ազգ ենք. պարտավոր ենք խորապես գիտակցել այս պահանջի կարեւորությունը: Լեզվի օրենքն ընդունելիս հայոց խորհրդարանի պատգամավորը չպետք է օրինակ բերի խոշոր պետությունների հոչակագրերից: Նրանցից սովորելով. պետք է նկատի ունենալ մեր ազգային ավանդույթները. այսօրվա վիճակը եւ հեռանկարային պահանջը: Ինչու՞ բարգնենք. որ խորհրդային 70 տարիների ընթացքում հայ ժողովրդի մի զգալի մասը հեռացել է իրենից: Վերահայացման պահանջը շատ կարեւոր է: Դրա հիմնական միջոցն ու ճանապարհը առաջին հերթին ազգային լեզվով կրթվելու հրամայականն է: Չմոռանանք. որ օտարախոս հայը օտարանում է նաեւ ազգային երգից. երաժշտությունից. պոեզիայից. սովորություններից: Լեզուն պատմություն է եւ կենցաղ. հոգեբանություն է եւ հայրենիք. երաժշտություն է եւ հոտարտություն. ներկա է եւ գալիք: Օտարախոս ժողովրդի մեջ մեռնում է անգամ գոյատեւելու զգացումը: Եթե արցախահայությունը. որ պայքարում է իր լիիրավ ինքնորոշման համար. մոռանա ազգային լեզուն եւ օտար դպրոցներում կրթի իր զավակներին. ապա անիմաստ կդառնա նրա գոյամարտը. կարժեզրկվեն նրա մարտիրոսվածների հուշն ու հիշատակը:

Ստեփանակերտում հայերեն սովորող աշակերտների թիվը առաջին դասարաններում անհամեմատ ավելացել է: Քչացել է այն ծնողների թիվը. ովքեր դիմադրում են հայկական կրթությանը: Դրությունը փոխվել է նաեւ Ստեփանակերտի մանկավարժական կադրերի պատրաստման օջախում: Առաջին եւ երկրորդ կուրսերում համատեղ սովորում են հայկական եւ ռուսական կրթությամբ երիտասարդները. որոնց ուսուցումը տարվում է հայերեն: Ավելացվել են հայոց լեզվի ժամերը ռուսական կրթությամբ աշակերտների համար:

Սակայն դա դեռեւս մեծ գործի սկիզբն է:

Սոկրատ ԽՄԼՅԱՆ
Բանասիրության թեկնածու. դոցենտ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ

Բառ եւ մտածողություն

Մտքի նույնական ձեւ. որքան որ լեզու

Բոլորովին վերջերս «Ազգ» եռօրյայում (թիւ 82. 27.11.91 թ.) արտասահմանյան մամուլից (*Լը Պոնեն*) արտատպվեց մի ուշագրավ հոդված: Այն վերաբերում էր լեզվի եւ մտածողության առնչությանը. ըստ որում կոնկրետ հարցադրումով. *«Աշխարհում հաշվվում է մոտ վեց հազար լեզու: Իսկ մտածողության քանի՞ ձեւ կա արդյոք»:* Անմիջապես ասենք. որ սա սխալ հարցադրում է: Հոդվածը բավական փոքր է. որով չի կարելի բացատրել նրանում ընդգրկված հարցերի մակերեսային արծարծումը:

Հոդվածում շոշափվող հարցերն ունեն տեսական լեզվաբանական եւ փիլիսոփայական բնույթ: Ի թիվս մեկ-երկու ճիշտ նկատառումների. տեղ են գտել ոչ հավաստի. նույնիսկ սխալ դատողություններ լեզվի եւ մտածողության փոխհարաբերության վերաբերյալ: Ավելին. այդ դատողությունները «հիմնավորվում են» հանրահայտ օրինակներով ու համեմատություններով:

Ինչպես երեւում է. հոդվածագիրն այնքան էլ հմուտ չէ նման տեսական հարցերում: Բայց դա չի խանգարել հիշյալ պարբերականում անդրադառնալու լեզվի փիլիսոփայության այդ ահռելի խնդրին. լայն ընթերցողին բացատրելու լեզվի եւ մտածողության առնչությունը: Սեղմ էջերի սահմանում նա ընդգրկել է լայն. տարողունակ. առանցքային մի հարց. այն էլ ոչ այնքան մասնագիտորեն: Ուստի սխալ հարցադրումը ստացել է ոչ այնքան ճիշտ մեկնաբանություն:

Հոդվածում հեղինակը դիմում է այնպիսի վկայակոչումների. որոնք միակողմանի են: Այսպես. ըստ մի վկայակոչման. միտքը եւ լեզուն մի ամբողջություն են. որտեղ միտքը **«բառերը որպես «հագուստ» փոխ է առնում նյութականանալու համար. բայց հարցը փորձել հանել այդ «հագուստը» եւ մտածել առանց լեզվի օգնության»:** Ասենք. որ լեզուն ոչ միայն սերտորեն կապված է մտածողությանը. այլեւ պայմանավորված է այդ մտածողությամբ. ինչպես որ հակառակը: Ուստի անհնարին է մտածել առանց լեզվի. ինչպես որ բացառվում է խոսել առանց մտածելու. նույնիսկ ամեն մի անմտություն որոշակի մտածողության արդյունք է. ինչպես որ յուրաքանչյուր անիսաս վերաբերմունք լավագույն դեպքում մի քան է: Այս փոխպայմանավորվածությունը լեզվի եւ մտածողության առընչության կարեւորագույն կետերից է:

Բերվում է գերմաներենի բարահյուսական մի առանձնահատկությունը. ըստ որի նախադասության մի տիպ կա. որի դեպքում բովանդակությունը լիովին ընկալվում է միայն վերջում դրվող նախամասնիկների եւ նման բառերի դրսեւորումից հետո. որի դեպքում էլ արվում է ոչ ճիշտ եզրակացություն. **«Սեփական լեզվի պարտադրած կանոններից ազդվելով՝ դյուրությամբ կարելի է հանձնվել էքսցենտրիզմի գայթակղությանը»:** Այս դատողությունն արվում է հենվելով ոչ այնքան հայտնի Ֆրանսիացի լեզվաբանի դիտարկման վրա: Եւ ստեղծվում է այն տպավորությունը. որ հեղինակը արմատական խնդրի արծարծմանը մոտեցել է ածանցյալ միջոցներով:

Հոդվածագրի դիմած հեղինակներից միակ հայտնին թերեւս Ֆրանսիացի հոչակավոր լեզվաբան Է. Բենվենիստն է: Սակայն նրանից բերված այն դատողությունները. թե **«մենք մտածում ենք նախօրոք մեր լեզվի ձեւավորած աշխարհի համեմատ» եւ «մեր խոսքն է սահմանորոշում ու կազմակերպում մեր մտքերը»**. այնքան էլ Բենվենիստինը չեն: Դրանք հայտնի են գիտությանը նրանից առնվազն մեկուկես հարյուրամյակ առաջ: Նկատի ունենք հայկաբան գերմանացի լեզվափիլիսոփա Վ. Ֆոն Հումբոլդտի հայտնի տեսությունը: Հումբոլդտը գտնում էր. որ լեզուն այնպիսի երեւույթ է. որից մարդ-անհատը դուրս չի գալիս իր ողջ գիտակցական կյանքում: Դրանից բացի. ճիշտ չէ այն. թե խոսքն է որոշում եւ կազմակերպում մեր մտքերը. լեզուն գոյանում եւ ձեւավորվում է մտածողության ընթացքում. ինչպես որ մտածողությունը զարգանում է լեզվի միջոցով: Այստեղից էլ այն. որ ամեն մի լեզու իր բառապաշարով եւ կառուցվածքով յուրահատուկ է տվյալ հանրության մտածողության առումով. նրանում կուտակված է տվյալ հանրության ազգային մտածողությունը: Եւ պատահական չէ. որ միեւնույն լեզվով խոսող տարբեր հանրություններ (ասենք անգլիացին եւ ամերիկացին. պորտուգալացին եւ բրազիլացին եւ այլն) գոյացնում են միեւնույն լեզվի (ասենք անգլերենի. պորտուգալերենի եւ այլն) ակնհայտ տարբերակներ. դա լիովին պայմանավորված է տվյալ հանրության մտածողությամբ. վերջինիս արտահայտիչ լեզվի տվյալ տարբերակով իբրեւ այդ հանրության սոցիալական կացության. մտածողության արդյունք:

Եւ այստեղ. կարծում ենք. որ ոչ մի կերպ չի կարելի ընդունելի համարել մեկ այլ Ֆրանսիացի լեզվաբանից բաղված այն դատողությունը. որի համաձայն **«Անհնար է առանցքել. թե որոշակի կապ գոյություն ունի լեզվաբանական (այսինքն՝ լեզվական՝ -Վ. Հ.) կառույցների եւ մտքի համակարգերի միջեւ: Ազդեցության հարցում հարկավոր է վերապահումներով մոտենալ»:** Հենց այստեղ է. որ պետք է ասենք՝ ընդհանրապես. լեզվական եւ գիտակցական կառույցները. այլ կերպ ասած՝ բառը եւ իմաստը կամ մտածողությունը սերտորեն կապված են միմյանց. եւ դժվար է պնդել. թե դրանց միջեւ որոշակի կապ չկա: Մարդկային մտածողությունը իմացական գործունեության արդյունք է. ուստի այն լիովին լեզվական է. հասկացական: Անջրպետել դրանք իրարից նշանակում է բացառել մարդկային գիտակցության մենաշնորհը:

Ամեն մի լեզու տվյալ հանրության ոգու արտահայտությունն է. որ գոյացել է պատմական զարգացման ընթացքում: Եւ ինչպես որ գոյություն չունի մի ժողովուրդ. որ ունեցած չլինի կամ չունենա իր լեզուն. այնպես էլ հնարավոր չէ մատնացույց անել. առանձնացնել մի լեզու. որ չունենա իր կրող ժողովուրդը: Եւ քանի որ դա այդպես է. ապա առավել եւս հնարավոր չէ մատնանշել մի հանրություն. որը կանգնած չլինի գիտակցության. այլ կերպ ասած՝ պատմական եւ մշակութային զարգացման որեւէ աստիճանի վրա: Ամեն մի հանրություն ծնունդն է իր լեզվի եւ արարիչը իր մշակույթի. իր մտքի: Այդ դեպքում է. որ հնարավոր է խոսել լեզվի. ինչպես նաեւ մտածողության ազգային բնույթի մասին: Յուրաքանչյուր լեզու ազգային երեւույթ է. ինչպես որ ամեն մի մտածողություն նախապես ազգային է. հետագայում է. որ այսինչ կամ այնինչ միտքը. իմացությունը դառնում է ազգերի. ժողովուրդների սեփականությունը. ինչպես որ շատ լեզուներ ձեռք են բերում միջազգային հնչեղություն. գործածության ոլորտ: Ամեն մի լեզու ազգային մտածողություն է դրսեւորում. ինչպես որ ամեն մի միտք ծրվում է որեւէ ազգային լեզվով:

Այս առնչությամբ ուզում ենք ցնցել հայոց ազգային լեզվի դերը հայկական մտածողության պարագայում: Հայեցի մտածողությունը երեւան է գալիս միայն հայերենի միջոցով: Անհնարին է հայեցի մտածել եւ գործել առանց հայերենի: Թերեւս սա է այն միակ դատաքարը. որ այդման հոգս է առաջ բերում հայկական կրթության հարցում նախկինում կուտակված դժվարությունը: Այսօր հայ երեխան պետք է հաճախի հայկական դպրոց. որպեսզի մտածի հայեցի. չհեռանա իր ազգային մտածողությունից. այսինքն՝ պատմականորեն կուտակված հայկական մշակույթից ու գիտելիքից:

Հայերենը մեր ազգային ոգու հայելին է. միաժամանակ՝ մեր մտքի եւ մեր մշակույթի ընտանարանը: Մենք պետք է ոչ միայն ջինջ պահենք այդ արտացոլվածքը. այլեւ ըստ ամենայնի օգտագործենք նրա գանձերը: Այսօր ունենք դրա լայն հնարավորությունը. մի ժողովրդի անկախությունը ենթադրում է ազգային մշակույթի. ընդ որում եւ առաջին հերթին մայրենի լեզվի լիարժեք. ինքնակա գործածություն:

Վերջում չենք կարող չհայտնել մեր զարմանքը. թե նման մի հոդվածը ինչպես կարող էր այդքան ուշագրավ դառնալ եւ բուրգմանաբար երեւան գար ավելի շատ քաղաքական եւ հասարակական բնույթի տեղեկություններին այնպես տրամադրող թերթում: Այդուհանդերձ. լեզվի մասին հոդված տպագրելը. ասենք. ոչ բոլոր պարբերականներն են համարում կարեւոր: «Ազգը» դրա կարեւորության օրինակը տվել է թեկուզ այդ հոդվածով: Շատ համակրելի կլինեն. եթե առաջիկայում հանդիպենք դրվատելի եռօրյա թերթի էջերում հայոց լեզվի մերօրյա հոգսերին վերաբերող հոդվածներ. հրապարակային խոսք:

Վազգեն ԱՍՏՎԱՇԱՏՅԱՆ
Լեզվաբան. բանասիրության թեկնածու

digitised by A.R.A.R.@

Հայ կանանց միջազգային համաժողով Ժնեւում

Հայ կինը պետք է իր ներդրումն ունենա քաղաքականության մեջ

Նոյեմբերի 7-9-ը Ժնեւում կայացավ համագումար «Հայ կանանց դերը պատմության մեջ» թեմայով: Մեր հանդիպումից հրավիրված էին Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ, Մարիամ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԸ եւ Անահիտ ԲԱՅԱՆԴՈՒՐԸ: Համագումարին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայ կանայք: Ներկա էին նաեւ ճանաչված տղամարդիկ: Մեր թղթակից Գայանե ԱՖՐԻԿՅԱՆԸ հանդիպեց համագումարի մասնակիցներից մի քանիսի հետ:

Ռիտա ԲԱԼՅԱՆ
հասարակական գործիչ, ԱՄՆ

– Վերջերս դուք մասնակցել եք Ժնեւում կայացած «Հայ կանանց դերը պատմության մեջ» համագումարին: Ի՞նչ կասեիք այդ մասին:

– Այդ ամենը շատ հաջողությամբ էր կազմակերպված ՀԲԸՄ Ժնեւի մասնաճյուղի կողմից: Եկած էին տիկիններ հայրենիքից, ինչպես նաեւ ընփյուռքի շատ տեղերից: Ես ընտրեցի ելույթի թեմա *«Հայ կինը այսօր»*: Քանի որ այսօրը հիմքն է վաղվա, ես անդայման պետք է խոսեի հայ այսօրվա կնոջ մասին: Ըրի հարցազրույցներու շարք մը -Միջին Արեւելքեն, Հայաստանեն եւ Եւրոպայեն Ամերիկա գաղթող տարբեր սերունդների կիներու եւ տղամարդկանց հետ. Ամերիկայի մեջ շատ մեծ դեր խաղցող կանանց շարժումների հետ կապ ունեցող կանանց հետ: Որպեսզի անոնցմե օրինակ առնենք եւ նայենք, թե ինչպես կրնանք զանոնք գործակցել մեր հայ կընոջ առնելիք քայլերուն, որպեսզի ան կարենա այս տղամարդկանցով կառավարված հասյան աշխարհի մեջ պարտադրելու իմքիները:

Իմ թեմաս այսպես ներկայացրած էի. արած էի բաղդատելու, հայ կինը կտարբերի՞ ուրիշ ազգերի կիներեն, հայ կինը կտարբերի՞ հայ տղամարդեն: Հետո ներկայացրի կինը իր կենսաբանությամբ եւ հոգեբանությամբ: Անկե վերջ անցա հայ կինը ընկերության մեջ: Եւ այսօր կանանց իրավունքը համաշխարհային մասշտաբով համահավասար կնկատվի մարդկային իրավունքներուն: Եւ այդ է, որ պետք է հասկանա Հայաստանը՝ թե կանանց իրավունք տալով, չի տա ուրիշ որեւէ տեսակի իրավունք: Եւ ասիկա չպիտի սղասեն կիները, որպեսզի մենք իրենց տա: Իրավունքը ձեռք կբերվի:

Այսօր հայ կինը, ըլլա հայրենիքի մեջ կամ սփյուռքի, պետք է ըլլա նաեւ գերմարդկային կին եւ գերմարդկային մայր: Կինը պիտի բերե փրկությունը այս աշխարհի:

Ես պիտի ասեմ, որ այսօր հայ կինը պետք է անդայման իր ներդրումն ունենա քաղաքականության մեջ: Ոչ թե իբրեւ քարտուղարուհի կամ այլ ինչ, այլ բերե իր ներդրումը սահմանադրության, գրության, ամբողջ երկրի կազմավորման եւ կերտման գործում:

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
բանաստեղծ

– Շատ չեմ ձգտում արտասահման գալ, որովհետեւ գտնում եմ, որ հիմա մտավորականության ներկայությունը կարեւոր է այստեղ: Բայց Ժնեւի կանանց համագումարի հրավերը ընդունեցի, որովհետեւ գտնում եմ, որ իսկապես կարեւոր են բոլոր այն քայլերը, որոնք նպաստում են սփյուռք-հայրենիք միասնությանը: Եւ պատահական չէր, որ համագումարում իմ ելույթի թեման էր *«Հայ կինը եւ հայ ժողովրդի միասնությունը»*, որովհետեւ գտնում եմ, որ կինը, այնուամենայնիվ, մեծ անելիք ունի այդ գործում, քանի որ ժողովուրդն ասում է. *«Ճիշտ է, տղամարդը գլուխն է, բայց կինը վիզն է, որ կողմն ուզենա՝ կթեքի»*: Ես խոսեցի նաեւ հայ կնոջ դերի՝ երեխաներին հայկական դաստիարակություն տալու, արմատներին ավելի կապելու մասին, ինչպես միշտ, շեշտը դնելով լեզվի վրա: Որովհետեւ միասնականության խնդրում երեւի ամենահիմնական գործոններից մեկը լեզուն է: Իհարկե, անդրադարձա նաեւ մեր երկրի ներկա վիճակին, շեշտելով, որ ավելի քան երբեմն մեզ հարկավոր է ոչ միայն սփյուռք-հայրենիք միասնություն, այլ նաեւ՝ ներքին, ազգային միասնություն: Մենք կարող ենք առանձին վեճեր ունենալ ներկա վարչակարգի հետ, բայց հիմա պահն է, որ բոլորս այդ վեճերի ներքին սկզբունքները պահելով հանդերձ, համենայն դեպս, համախմբվենք Հայաստանի ղեկավարության շուրջը: Ես գործածեցի հետեւյալ պատկերը, որը կարծում եմ բավական բնորոշ է մեր այս իրադրության համար, որ մեր ժողովուրդը եւ իր ղեկավարությունը հիմա կարծես թե լուսնոտի պես քայլում են բարձրահարկ շենքի եզրով եւ հարկավոր չէ գոռոզ, անզգույշ աղմուկ բարձրացնել, նրանք կարող են ընկնել: Պետք է բողոքենք, որ ժողովուրդն էլ, ղեկավարությունն էլ իջնեն այդ լարված բարձունքից: Ահա այդ տեսակետից շատ անհրաժեշտ է ազգային համաձայնության մոտիվը:

Իմ կարծիքով, չնայած դժվարություններին, Բարեգործական Ժնեւի մասնաճյուղը, գլխավորում է Թալին Ավագյանը, շնորհակալ գործ էր կատարել՝ կազմակերպելով այդ համագումարը:

Մարիամ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
քաղաքագետ

– Մեր հասարակական կյանքում, կենցաղում, պատմությունն ուսումնասիրելիս ես միշտ անդրադարձել եմ այն փաստին, թե որո՞նք են այն պատմական նախադրյալները, որ ձեւավորեցին մեր ազգային-հասարակական գիտակցությունը կնոջ նկատմամբ եւ ինչո՞ւ մեր կանայք լիովին չեն ներգրավվել հասարակական եւ քաղաքական կյանքի մեջ: Պատմությունը վկայում է, որ հայ կինը միշտ էլ ձգտել է ներգրավվել հասարակական, քաղաքական կյանքի մեջ: Սակայն հասարակական գիտակցությունը միշտ որոշ վերապահումով է վերաբերվել կնոջ հասարակական դերին: Եւ այդ հանգամանքը խոչընդոտել է կնոջ բացահայտմանը: Պետությունը կգործի շատ ավելի հավասարակշռված, եթե կնոջ եւ տղամարդու գաղափարները զուգորդվեն: Եւ այս պարագայում շատ կարեւոր է, թե արդյոք հասարակությունն ընդունո՞ւմ է կնոջը որպես հավասարազոր անդամ տղամարդուն: Պետականության, նաեւ քաղաքային մշակույթի բացակայությունը շատ խորը արմատներ են թողել մեր ազգային գիտակցության մեջ կնոջ հասարակական դերի արժեւորման բնագավառում:

Այսօր Հայաստանում հասարակական գիտակցության մեջ արմատավորված է որոշակի վերաբերմունք կնոջ՝ որպես հասարակության հավասարազոր անդամի նկատմամբ: Ժնեւի համագումարի ելույթս նվիրված էր հիմնականում Արեւելահայաստանում կնոջ նկատմամբ հասարակական գիտակցությանը եւ, ավելի շատ, Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայությունն: Ընդգծելի էր հատկապես հասարակական գիտակցության ձեւավորման հարցը: Պարսկական մշակույթի, օրենքների ազդեցությունը, քաղաքային բնակչության վերացումը մեծապես խաթարեցին ազգային գիտակցությունը կնոջ նկատմամբ: Սակայն պետք է ասեմ, որ արդեն 19-րդ դարում, երբ Հայաստանը դառնում է Ցարական միապետության ծայրամասերից մեկը, ռուսական օրենքների տարածումը Հայաստանում դրական դեր են կատարում կնոջ արժեւորման գործում:

Կոմունիստական ռեժիմը երկակի դեր կատարեց հասարակական գիտակցության մեջ կնոջ նկատմամբ: Անկասկած, հավասարության գաղափարը դրական դեր կատարեց: Սակայն կոմունիստական ռեժիմը կեղեքում էր ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջը:

Մենք այսօր կանգնած ենք մեր բաղձալի անկախության շեմին: Ձեւավորում ենք մեր ազգային հասարակական-քաղաքական ինստիտուտների համակարգը: Եւ վերջապես, փորձում ենք ձեւավորել մեր ներքին եւ արտաքին քաղաքականությունը: Եւ եթե այդ ընթացքը ձեւավորվի հասարակության մեջ հարգված միայն տղամարդու արժեքների վրա, անտեսելով կնոջը՝ բնության տված նրա էությունը բնութագրող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հավասարակշռությունը, ճկունությունը, համբերությունը եւ այլն, դժվար մենք կարողանանք գործակցել քաղաքակիրթ աշխարհի հետ: Հասարակական գիտակցությունը, ընդունելով կնոջ եւ տղամարդու հավասարությունը, ձեւավորվում է հիմնվելով ասածս առաջ հավասար այդ երկու մահկանացուների արժեքներով հավասարապես եւ զարգանում է համաչափ, ներդաշնակ ընթացքով:

Անահիտ ԲԱՅԱՆԴՈՒՐ
պատգամավոր

– Իմ ելույթը կարում էր ավելի շատ տեղեկատվական բնույթ: Ես ուզեցի տեղեկացնել այնտեղ, թե ինչ է կատարվում մեզ մոտ: Տալիս էի կյանքի պատկերը, առանց տարանջատելու կին եւ տղամարդ հասկացությունները: Ես այդ տարանջատումը գտնում եմ արհեստական: Հայ կանայք, իմ կարծիքով, հատկապես վերջին տարիներին լիարժեք մասնակցում են հասարակական կյանքին: Ժողովուրդը մի ընտանիք դարձած աշխատում է հավատարիմ մնալ իր ազգային նկարագրին, պահպանել բարոյական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ: Ելնելով դրանից, ես ներկայացրի մեր կյանքի տարբեր հատվածներ, խորհրդարանի աշխատանքը, Մոսկվայի հայկական ներկայացուցչության աշխատանքը: Ես երեւի դուրս եկա իմ ելույթի շրջանակներից (թեման էր «Հայ կինը եւ քաղաքականությունը»), ծավալվելով մեր խնդրի շուրջ պատմեցի նաեւ օտարազգի կանանց մասին: Ինձ համար միշտ ամենաբարձր չափանիշն է եղել Ելենա Բոնները: Խոսեցի նաեւ ռուս մրցավորականության գործունեության մասին կազմված արգելյան խնդրի հետ: Հատկապես պատմեցի օտարազգի այն կանանց մասին, որոնք արդեն երեք տարուց ի վեր զբաղվում են հայ փախստականների ճակատագրով: Դրանք են Անահիտա Բեսաբվիլին, Լիդիա Գրաֆովան եւ հանգուցյալ Վիկտորիա Չալիկովան:

– Սակայն դա հայ կանանց համագումարն էր:

– Բայց ես էլ հայ կին եմ եւ, նրանք տեսան, թե ինչով է մտահոգված եւ ապրում տվյալ հայ կինը: Երբեմն հնչում են կարծիքներ, թե հայ կինը չի ընդգրկվում հասարակական կյանքի ոլորտներում, սակայն ես այդ կարծիքին չեմ: Գտնում եմ, որ ով ցանկություն ուներ՝ ներդրեց իր հնարավորությունները: Չէ՞ որ իրոք շատ համեստաբար եւ բարձր պրոֆեսիոնալիզմով խորհրդարանում աշխատում են կին պատգամավորները: Հիշենք նաեւ, թե շարժման օրերին ինչ ակտիվ մասնակցություն ունեցան կանայք: Շատերին ես գիտեմ միայն անուններով: Մանուշակը անընդհատ Գեղաշեն էր գնում ծխախոտ, հագուստ, ուտելիք բաժանելու: Արքունին, Աղավնին, Անահիտը, նրանք շատ էին: Բոլոր ոլորտներում կան նվիրված եւ ակտիվ գործող կանայք: Ես գտնում եմ, որ քաղաքականության մեջ կինը նույն դերը կարող է կատարել, ինչ տղամարդը: Դա կախված է անհատականությունից, իսկ ընդհանրապես, կյանքում կարող է պարզապես բերել ջերմություն, համբերություն, ներդաշնակություն: Նրանք տեսան, թե ինչով է մտահոգված եւ ինչով է ապրում հայ կինը: Մայրերի կոմիտեի նախագահն է Գրետա Միրզոյանը, այս ցանկը կարելի է անվերջ շարունակել:

Համագումարը, ասեմ, որ անցավ բարձր մակարդակով, ելույթները բազմակողմանի էին եւ հագեցված: Ի դեպ, համագումարը վարում էր Հրաչ Գյուլումջյանը, շատ հմուտ եւ գեղեցիկ ձեւով: Համագումարին հատուկ հմայք եւ նշանակություն տվեց Հայկուհի Ուզունյանի ներկայությունը: ■

«Նրանք հասկանում են, որ մենք լուրջ հանդիպում ենք»

Անահիտ ԲԱՅԱՆԴՈՒՐԻՆ ճանաչում եմ դեռ 1988-ից, երբ հանդիպեցի Մոսկվայի ԽՍՀՄ Գերագույն դատարանում սումգայիթյան դատավարության ժամանակ: Այնուհետեւ մեր անմիջական հանդիպումներն ու զրույցները շարունակվեցին ռուսաստանյան համագումարներում, ուր Անահիտը ակտիվ աշխատանք էր տանում Ռուսաստանի խորհրդարանում: Մեր զրույցները փորձեցինք շարունակել այստեղ՝ Հայաստանում:

– Օգոստոսյան խողովության օրերին դուք այն քչերից մեկն էիք, որ ծակատագրական գիշերը մնացիք Սպիտակ տանը՝ Ռուսաստանի խորհրդարանում:

– Ինձ, Վիգեն Խաչատրյանին եւ Խոսրով Հարությունյանին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը օգոստոսի 18-ին անմիջապես ուղարկեց Մոսկվա Ռուսաստանի խորհրդարանի հետ կապ հաստատելու նպատակով: Մի օր հետո մեզ միացան նաեւ Հովհաննես Իգիթյանը եւ Շավարշ Քոչարյանը: Նրանց բերած փաստաթղթերը մենք հանձնեցինք Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Գեորգի Կունաձեին, որն էլ դրանք հրապարակեց Սպիտակ տանը կայացած մամլո ասուլիսներից մեկում: Երեք օրվա ընթացքում մենք անընդհատ զանգահարում էինք մեր խորհրդարան տեղյակ պահելով զարգացող իրադարձություններին: Այդ օրերին Սպիտակ տան առաջ տեղի ունեցան մի քանի հանդիպումներ, որոնցում ելույթ ունեցանք ես եւ Շավարշ Քոչարյանը:

Ռուսաստանի խորհրդարանի պատգամավորները բարձր գնահատեցին մեր վերաբերմունքը եւ ներկայությունը: Երրորդ օրը ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի մամլո կենտրոնից զանգահարել էին Հայաստանի ներկայացուցչություն եւ շնորհակալություն հայտնել մեր խմբի բարոյական աջակցության համար:

– Կոնկրետ ի՞նչ աշխատանք եք կատարում Ռուսաստանի խորհրդարանում:

– Սկզբում ես աշխատում էի հետեւել խորհրդարանի աշխատանքներին եւ կողմնորոշվել: Հետո կապ հաստատեցի իրենց հանձնաժողովների, պատգամավորական խմբերի հետ: Իհարկե, պատշաճական կարեւոր փաստաթղթերի փոխանակումը միշտ տեղի է ունենում երկու խորհրդարանների միջեւ, սակայն անմիջական շփումները ավելի լայն, կենդանի պատկերացում են տալիս թե մեր խնդիրները իրենց ներկայացնելիս եւ թե իրենց հարցերը մեր պատգամավորներին ներկայացնելիս: Ինչ վերաբերում է մեր երկու խորհրդարաններին, տարբերությունը շատ մեծ է...

– Ի՞նչը նկատի ունեք:

– Կազմը եւ ընդհանուր ոգին: Ի վերջո, մենք փոքր հանրապետություն ենք, մի ընտանիք, թեկուզեւ ներքին անհամաձայնություններով: Եւ այս մեր վեճերը տան կոիվներ են: Իրենց մոտ կրում է ավելի պաշտոնական բնույթ: Բայց նրանք ունեն նաեւ շատ պրոֆեսիոնալներ, հատկապես իրավաբաններ: Օրինակ, Բորիս Զոլոտուխինի ջանքերով շատ մեծ բարեփոխություն կատարվեց Ռուսաստանի իրավաբանական համակարգում: Ունեն նաեւ շատ ուժեղ սահմանադրական խումբ, փորձագետներ: Հետո, Ռուսաստանում կան մեծ պրոբլեմներ ինքնավարությունների խնդիրները:

– ՌԽՖՍՀ համագումարներից մեկի ժամանակ, երբ Կովալյովը ներկայացրեց իրենց պատգամավորական խմբի Լեռնային Ղարաբաղ կատարած արդյունքները, խորհրդարանը շատ սառնությամբ ընդունեց, անգամ չէին ուզում լսել:

– Դա համագումարի վերաբերմունքն էր, այլ ոչ թե խորհրդարանի: Համագումարը շատ խայտաբղետ կազմ ունի, խորհրդարանը այդ տեսակետից ավելի գործնական վերաբերմունք ունի:

Հիշենք, որ կենտրոնական մամուլը եւ հեռուստատեսությունը չորս տարվա մեջ իր դավադիր դերը կատարեց: Այժմ այդ հարցում նկատվում է զգալի առաջընթաց: Ռուսական «Վեստի» նոր հեռուստաձրագիրը մեծ աշխատանք տարավ՝ վերափոխելու ռուս մարդու ընկալումը:

Լրատվության ճիշտ եւ օբյեկտիվ տարածմանն էր նվիրված նաեւ Սպիտակ տանը վերջերս կայացած Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Ղազախստանի լրատվական խմբերի հանդիպումը, որում ինքնակամ առաջարկներից մեկն էլ վերաբերում էր հեռուստակամուրջներ անցկացնելուն:

– Իսկ Ռուսաստանի կառավարությունը լրջությա՞մբ է մոտենում Հայաստանին: Արդյոք նորի՞ց խաղեր չեն գնում:

– Հին հարաբերություններն այժմ բեռ են, եւ նրանք էլ աշխատում են դուրս գալ ծանր իրավիճակից: Չեմ կարծում, թե այստեղ կա խաղի պահ: Ես չեմ կարող ասել, թե յուրաքանչյուրը ինչպես է վերաբերում, բայց կա հավաքական պատկեր, այն ինձ թվում է եւ լուրջ, եւ անկեղծ: Պարզապես, իրենց համար կան ավելի կարեւորագույն հանգույցներ, ներքին բարդ խնդիրներ, որոնք մենք պետք է հաղթահարենք:

Ես կարծում եմ, լուրջ պայմանագիր կկնքվի մեր եւ Ռուսաստանի միջեւ: Դա մեզնից էլ կախված կլինի, եւ յուրաքանչյուր հանդիպում իր տեղը կգրաղեցնի: Նրանք իսկապես հասկանում են, որ մենք լուրջ հանդիպում ենք:

Մեզ մոտ անհամբերություն կա, ընդհանուր հոգնած վիճակ, բայց հիշենք, որ արդյունքներն անմիջապես չեն լինում, չէ՞ որ այս ճանապարհը շատ երկար է:

– Ձեզ ճանաչում՝ ենք որպես հիանալի թարգմանչուհու, երեւի թե այս խորհրդարանական, քաղաքական կյանքը խանգարում է գրականին:

– Իմ գրական աշխատանքը լրիվ մի կողմ է դրված: Ես մեծ ցավով եմ դա ասում, որովհետեւ ես շատ եմ սիրում իմ գործը: Թեեւ թարգմանությամբ չզբաղվեցի, բայց մի քանի ժողովածուներ հաստատեցի կազմել ու հրատարակել Մոսկվայում: Հիմա այս նոր գործունեությունը համարում եմ ավելի հրատապ ու կարեւոր:

Հարցազրույցը վարեց Հակոբ ՍԱՍՏՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Հունահայ գաղութն այսօր

Սփյուռքի հնագոյն գաղութներից մեկը մտահոգ է իր ապագայի հանդեպ

«Ինչու են հայերը գաղթում Միացյալ Նահանգներ կամ Կանադա: Այստեղ Հունաստանում նրանք ավելի մոտ են իրենց հայրենիքին», անվարժ անգլերենով ասում է հույն մի խանութպան Աթենքի քաղամասերից մեկում, որտեղ զբոսաշրջիկներ հաճախ են լինում: *«Մենք սիրում ենք միմյանց, նման ենք իրար, միևնույն ճաշատեսակներն ենք ուտում եւ մի ընդհանուր բնույթ ունենք»*:

Հունաստանը միշտ էլ ապաստան է եղել հայերի համար, որոնք դարեր շարունակ փախել են հեծանդումներից: 1920 թվականների սկզբներին ավելի քան 80 հազար հայեր Զմյուռնիայի, Կիլիկիայի եւ Կոնստանդնուպոլսի բրական հալածանքներից մազապուրծ փախչելով ապաստան են գտնում Հունաստանի տարբեր քաղաքներում եւ շրջաններում: 1920-ից մինչեւ 1940 թվականը մեծ թվով հայեր Հունաստանից ներգաղթում են Խորհրդային Հայաստան եւ կամ մեկնում մշտական բնակության Ֆրանսիա եւ Միացյալ Նահանգներ:

Հունաստանից ամենամեծ արտահոսքը գրանցվել է 1940-ական թվականների կեսերին, երբ գերմանացիները գրավեցին երկիրը, եւ սովը ծանր հարված հասցրեց ոչ միայն բնիկ հույներին, այլ նաեւ հյուրընկալվող հայերին, որոնցից երեք հազարը մահացան քաղցից եւ զանազան հիվանդություններից:

Այսպիսով, պատերազմի եւ սովի հետեւանքով հայերի թիվը Հունաստանում նվազեց եւ 50-ական թվականների վերջում հասավ 9 հազարի: Այդ թվականից ի վեր նրանց թիվն այնտեղ զգալի փոփոխություն չի կրել:

Չնայած ոչ մի վիճակագրական տվյալ գոյություն չունի, որ հաստատի Հունաստանում ապրող ներկա հայ բնակչության ճշգրիտ թիվը, այնուամենայնիվ, եկեղեցական թեմի տվյալներով այն չի գերազանցում 10 հազարը: Հատկանշական է, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի եւ իրանական հեղափոխության հետեւանքով հայերի մի նոր հոսք է ժամանել այնտեղ, հայերի թիվը հասցնելով 11 հազարի: Այս նորեկները, սակայն, վերջնականապես չեն հաստատվել երկրում այնտեղ տիրող տնտեսական անկայուն վիճակի, ինչպես նաեւ կառավարության կողմից բնակության եւ աշխատանքի տեղավորման հարցերը ժամանակին չլուծելու պատճառով: Անշուշտ, լեզվին չտիրապետելու գործոնը նույնպես դեր է խաղացել նրանց հեռանալու մեջ: Երկար ամիսներ գաղթականի դժվարությունները կրելուց հետո, նրանք վերջապես հանգրվանել են Կանադայում եւ Միացյալ Նահանգներում:

Ներկայիս հայերը Հունաստանում բնակվում են հիմնականում Աթենք եւ Սալոնիկ քաղաքներում, մեծամասնությունը մայրաքաղաքում, մոտ 2 հազարն էլ հյուսիսում գտնվող Էգեյան ծովեզրյա շրջաններում: Շատ հիշ թվով հայեր ապրում են նաեւ Կավալա, Կոմոտինի քաղաքներում եւ մոտակա կղզիներում:

Աթենքի հայաշատ շրջաններում, այնուամենայնիվ, հազվադեպ է լսվում հայերենը: Ոչ մի քաղամասում հայկական խանութների կամ ռեստորանների խիտ ցանց կարելի չէ գտնել: Միջին տարիքի հունահայը սովորաբար հունարենը խոսում է հայկական առոգանությամբ եւ իր մտահոգությունն է արտահայտում նոր սերնդի ապագայի հանդեպ:

Մինչեւ 1968 թվականը հայերին Հունաստանում անվանում էին «ալոդապոններ», այսինքն օտարերկրացիներ: Բնակության եւ աշխատանքի իրավունք էր տրված նրանց, ինչպես նաեւ «անցագրեր» ճանապարհորդելու համար: Բայց նրանց Թուրքիայի քաղաքացիներ էին համարում: Զարմանալիորեն, զինվորական խունտայի ղեկավար գնդապետ Յորգոս Պապադոպուլոսն էր, որ նրանց քաղաքացիություն շնորհեց. Կոնստանդին թագավորին գահընկեց անելուց հետո: Սակայն հայերի եւ հույների միջեւ հարաբերությունները էլ ավելի սրեցան 1974 թվականին խունտայի անկումից անմիջապես հետո: Այդ նույն թվականին Թուրքիան գավթեց Կիպրոսը: *«Մենք, հայերս էինք, որ հույների ուշադրությունը հրավիրեցինք այն բանի վրա, որ անհրաժեշտ էր բողոքել բրական կառավարության ոճրագործությունների դեմ»*, ասում է Կարո Սինապյանը, որ համայնքի ակտիվ անդամներից է:

Երկար ժամանակ «ալոդապոն» համարվելը բացասական ազդեցություն է թողել հայերի վրա: Նրանց չի թույլատրվել համալսարան ընդունվել, մի քան, որ առաջ է բերել միաժամանակ եւ որակյալ եւ անորակ բանվորների եւ մանր առեւտրականների մի հսկայական բանակ: Սա էլ իր հերթին նպաստել է, որ նրանց դասեն երկրորդ կարգի քաղաքացիների շարքը: Համայնքում երկար տարիներ ընդգծվել է ինժեներների, իրավաբանների, բժիշկների եւ դասատուների սուր պակասը:

«Ամեն ինչ փոխված է այժմ», ասում է Մինասյանը: Այսօր համայնքի անդամների 70 տոկոսը նյութապես ապահովված վիճակում է: Երիտասարդները համալսարան են հաճախում, եւ հայերը երկրորդ կարգի քաղաքացիներ չեն համարվում այլեւս: Բայց հունական կառավարության բարձր խավերում հայ ծառայողներ դեռեւս չկան: Կան մի քանի աչքի ընկնող գիտնականներ, գրողներ եւ նկարիչներ, որոնք համայնքի պարծանքն են համարվում: Նրանց թվին են պատկանում Սոֆիա Հակոբյան դպրոցի տնօրեն Միհրան Քուրդողլյանը, որը հաճախ է ելույթ ունենում միջոցառումների ժամանակ, Համազգայինի Հակոբ Փափազյանի անվան երգչախմբի տնօրեն Մկրտիչ Գրիգորյանը, Սարգիս Սղապայանը, որը վերջերս *«Հայաստանը դասընթացների ափխարհում»* վերնագրով մի գիրք հրատարակեց (նա նույնպես հեղինակ է *«Հայաստանը եւ հայկական հարցը»* գրքի), Զավեն Գրիգորյանը *«Նոր ափխարհ»* թերթի խմբագիրը եւ Կալոպակյան դպրոցի տնօրենը, ինչպես նաեւ Արդա Մանդիկյանը նախկին օրերայի երգչուհին, որ 6 տարի շարունակ եղել է Աթենքի Ազգային օպերայի համատնօրենը: Այժմ նա Մարիա Կալլասի անվան ուսումնարանի բոլակներ շնորհող կոմիտեի անդամ է:

Գաղութում հասարակական լայն ափխատանք են ծավալում Համազգայինի մշակութային կազմակերպությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը, Հովարդ Կարագյոզյան հասատությունը եւ Հայկական կաղույս խաչի ընկերությունը:

Երիտասարդ սերունդը վտանգի առաջ

Վերոհիշյալ կազմակերպությունները եւ եկեղեցիները կարեւոր դեր են կատարում համայնքի կենսունակության պահպանման գործում: Նրանց հիմնական նպատակն է երիտասարդ սերնդին փրկել ուծացումից: Դժվարությունը կայանում է նրանում, որ համայնքը փոքր է: *«Միայն մի բուռ հայեր են ընդգրկված համայնքի հասարակական գործունեության մեջ»*,- ասում է Զավեն Գրիգորյանը Կալոպակյան դպրոցի տնօրենը: *«Մեծ թվով հայեր իրենց հետ են պահում, եւ նրանց մասին մենք չենք էլ լսում»*:

Երիտասարդ սերնդի հարցը խիստ մտահոգիչ է: Այն հիմնականում հունախոս է, եւ խառը ամուսնություններն այնտեղ բավական բարձր տոկոս են կազմում: Վերջին 3 տարիների ընթացքում 100 ամուսնություններից 49-ը եղել են խառը ըստ թեմական կամ ծխական տվյալների:

Հունաստանում մեծ թվով հայկական եկեղեցիներ կան: Նրանց թվում 10 առաքելական, 2 կաթոլիկ եւ 2 բողոքական եկեղեցիներ տարբեր քաղաքներում: Կաթոլիկ համայնքը հաշվում է 300 անդամ, մինչդեռ բողոքականը՝ մոտ 200 հոգի: Եկեղեցիները, սակայն, միայն Զատկվա, Ծննդյան տոների եւ հարսանեկան արարողությունների ժամանակ են դառնում մարդաշատ: *«Պատկերը շատ տխուր է»*,- ասում է մի աթենացի բնակիչ:

Բարձրագույն դպրոցներ չկան

Ամբողջ գաղութում գոյություն ունեն ընդամենը 3 դպրոցներ՝ բոլորն էլ տարրական եւ բոլորն էլ Աթենքում: Հայկական միջնակարգ դպրոց չկա, չնայած ներկայիս ծրագրվում է դպրոցներից մեկում նոր դասարաններ ավելացնել:

«Եթե անակնկալ դժվարությունների չհանդիպենք, այս տարվա աշնանը մենք կունենանք մի 7-րդ դասարան», ասում է Քուրդողլյանը: Մյուս երկու դպրոցները Կալոպակյան վարժարանն (հիմնված 1961-ին) ու Ազգային Զավարյան վարժարանը (հիմնված 1953-ին) ունեն ընդամենը 6 դասարան եւ առայժմ նրանք չունեն ավելացնելու դրանց թիվը:

Աթենքում կա նաեւ մի մանկապարտեզ, որին հիմնականում Ֆինանսավորում է համայնքի բողոքական հատվածը: Հայկական դպրոցներում եւ մանկապարտեզներում միասին սովորում են 353 աշակերտներ: Սոֆիա Հակոբյան դպրոցն իր 145 աշակերտներով ամենամեծն է, որից հետո գալիս են Կալոպակյան դպրոցն՝ իր 110 եւ Զավարյանը՝ 86 աշակերտներով:

Հայկական համայնքն իր քաղաքական, հասարակական եւ մշակութային նորություններն ստանում է հայաստան երկու թերթերի միջոցով, որոնք լույս են տեսնում Աթենքում: *«Ազաս Օրը»* (հիմնված 1945-ին) հայկական միակ օրաթերթն է: 1000 օրինակ տպաքանակով եւ 1976-ից հրատարակվում է Հովսեփ Բարազյանի խմբագրությամբ: Իսկ *«Նոր Ափխարհը»* Ռամկավար ազատական կուսակցության օրգանն է: Այն շաբաթաթերթ է, հիմնված 1948-ին: 1977-ից ի վեր հրատարակվում է Զավեն Գրիգորյանի խմբագրությամբ եւ ունի 600 օրինակ տպաքանակ:

Այս երկու թերթերը տեղի հայերի համար լրատվության միակ աղբյուրներն են: Ռադիո կամ հեռուստատեսային ոչ մի այլ միջոց հայկական ծրագիր չի սփռում:

Անորոշ ապագա

Սփյուռքում հունահայ գաղութին վերապահված դերի ու նշանակության մասին կարծիքները խիստ տարբեր են միմյանցից: Հոռետեսները շեշտը դնելով համայնքի փոքր լինելու հանգամանքի վրա, հարցականի տակ են դնում նրա գոյատեւումը: Առավել լավատեսորեն տրամադրվածները խիստ մեծ նշանակություն են տալիս հայրենիքին մոտիկ լինելու հանգամանքին: Նրանց կարծիքով, ծուլումը Հունաստանում այնքան արագ չի կարող ընթանալ, ինչպես ասենք հեռավոր Ամերիկայում, Ավստրալիայում կամ Կանադայում:

Արդարեւ, հունահայ գաղութի դերն զգալիորեն մեծացավ հայկական լիբանանյան քաղաքացիական պատերազմից հետո: Դաշնակցության օրգան «Դրոշակի» հրատարակությունը 1986-ին տեղափոխվեց Հունաստան: Գտնվելով արեւելքի եւ արեւմուտքի խաչմերուկում, Հունաստանը վերջերս դարձել է նաեւ կենտրոն, հյուրընկալելով Հայ մարմնամարզական ընդհանուր միության եւ Համազգայինի կազմակերպած միջոցառումների մասնակիցներին:

Ինչ որ հույն խանութպանն ասել էր հոդվածի սկզբում, իր մեջ ճշմարտության հատիկ է ներառում: Հարցը լուրջ քննարկման ենթակա է եւ առայժմ մնում է չլուծված:

ԱԼԻՍ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՄՆ Հուլիս 1991

Աթենքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Հունահայերը Ապրիլ 24-ի ցույցի ժամանակ

Բուենոս-Այրեսում բացվեց ԹՄՄ նոր կենտրոն

Բուենոս Այրես, - Կիրակի, Հոկտեմբեր 27-ին, տեղի ունեցաւ Սուրեն եւ Վրթինիա Ֆեսճեան բարեգործական նուիրատուութեամբ կառուցուած Բուենոս Այրէսի Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնի բացումը:

Ներկայ էին Արժանթինի արդարադատության նախարար, հայազգի դրն. Լեւոն Արսլանեան, Միացեալ Նահանգներէն յատկապէս այս առթիւ Բուենոս-Այրէս ժամանած բարեւար դրն. Սուրէն Ֆեսճեան, Թէքէեան Մշակութային Միութեան կեդրոնական վարչութեան ատենադպիր, դոքտ. Գէորգ Քէշիշեան, տիկ. Սեսիլ Քէշիշեան, Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնական վարչական ժողովի անդամ դրն. Յովսէփ Եուսէֆեան, Ռ.Ա.Կ.-ի Հարաւային Ամերիկայի շրջանային վարչութեան ու Թէքէեան Մշակութային Միութեան գործիչներ, ազգային ծանօթ դէմքեր եւ հոգեւորականներ:

Շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ նախարար Լեւոն Արսլանեան:

Նախարար Լեւոն Արսլանեան եւ դրն. Սուրէն Ֆեսճեան միասին կտրեցին ժապաւէնը եւ հոդազերծեցին կրանիթեայ տախտակը:

Հայր Մխիթար Գուսուզեան օրհնեց նորաբաց կեդրոնը: Կեդրոնի բակին մէջ տեղի ունեցաւ գինեծօն, որուն յաջորդեց ճաշկերոյթը:

Մեկ վայրկեան լռութեամբ յոնկայս յարգանք տալ, նորոգ հանգուցեալ բարեւարուհի Տիկ. Վրթինիա Ֆեսճեանի յիշատակին, խօսք առաւ Մոնթէվիդեոյի Հ.Բ.Ը.Մ.ի Նուպարեան-Մանուկեան վարժարանի տնօրէն դրն. Օհան Պոտրումեան, որ նախ ներկայացուց Թէքէեան Մշակ. Միութեան շուրջ կէսդարեայ գործունէութեան պատկերը, երախտագիտութիւն յայտնեց բարեւար դրն. Սուրէն Ֆեսճեանին թէքէեանցիներու հանդէպ ունեցած սիրոյն, գնահատանքին եւ հաւատքին համար, ու ապա շեշտեց որ այս մշակութային կեդրոնը պիտի ըլլայ լոյսի աղբիւրը, որմէ հոգեւոր սնունդ պիտի ստանան հազարաւոր հայորդիներ:

Բարեւարի կեանքին, գործունէութեան եւ բարեգործական նուիրատուութիւններու մասին խօսեցաւ դոքտ. Գէորգ Քէշիշեան:

Հուսկ բանը կատարեց Թեմին Առաջնորդ Գիսակ Սրբազան, որ նաեւ Պահպանիչով փակեց այս ճաշկերոյթը: ■

Սփյուռքահայ լուրեր

Ուրբրբաուսում հոկտեմբերի 27-ին բացվել է նախկին վրացահայ Սեղա Մաթեւոսյանի գեղարվեստական գործերի (30 յուղաներկ) ցուցահանդեսը:

Կահիրեում հոկտեմբերի 17-ին հայ գեղարվեստասիրաց միության դահլիճում նշվել է թարգմանչաց տոնը: Բանախոսել է տիկ. Արաքսի Դյուվլեսյանը:

Գումգաբուի Ս. Հարություն եկեղեցում հոկտեմբերի 27-ին նշվել է Վաղվաղյան դպրաց դասի 108-րդ եւ համանուն երգչախմբի 60-րդ կրկնակ տարեդարձները:

Փարիզում նոյեմբերի 1-ին ֆրանսահայ գրողների ընկերակցությունը հավաքական այցելություն է կազմակերպել հայ մշավորականների դամբարանին: Դամբարանում կրոնական արարողությունը կատարել է Նարեկ եպս. Շաքարյանը, որը հիշեց դամբարանում հանգչող 42 գրողների անունները (Լեւոն Բաշալյան, Արամ Անտոնյան, Արշակ Չոպանյան, Շահան Պերպերյան, Ահարոն Տատուրյան, Հրանտ Բալլայան, Անդրանիկ Ծառուկյան եւ այլն):

Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը, որ վերջերս շաբաթաթերթի էր վերածվել, հաղորդում է իր թերթին կատարված Կարո Գալըջյանի 75 հազար դոլարի նվիրատվության մասին:

Հունաստանի «Էստիա» հրատարակչության կողմից վերջերս լույս է տեսել Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի հունարեն երկրորդ հատորը:

Պլովդիվի քաղաքային համերգասրահում հոկտեմբերի 26-ին, «Երեւան» մշակութային միության կազմակերպությամբ տեղի է ունեցել Ավարայրի ճակատամարտի 1540-ամյակին նվիրված տոնախմբություն:

Անթիլիասի մերձակա Ճաղկաձոր (Մըզհեր) բարձունքի վրա նոյեմբերի 8-ին բացվել է Նշան Փալանջյան ճեմարանի «Նորպիկյան» մանկապարտեզի նորակառույց շենքը: Բացման արարողությանը մասնակցել է Գարեգին Բ. Կաթողիկոսը:

Անթիլիասիում, նոյեմբերի 3-ին Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարան է այցելել Ասորի ուղղափառ եկեղեցու պետ Զաքքա Ա. Ի-վազ պատրիարքը, ընկերակցությամբ Բեյրութի, Դամասկոսի եւ Լեռնալիբանանի ասորի համայնքների առաջնորդ եպիսկոպոսների:

Նոյեմբերի 9-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանում բացվել է Հայ գրքի 13-րդ ցուցահանդեսը:

digitised by A.R.A.R.@

Ֆրանսուա Միտերանը ելք է որոնում

Տարված անբնութագրելի մի ճգնաժամով, Ֆրանսիան «մաղձ» է ժայթքում, մինչ Միտերանը փորձում է սահմանադրական բարեփոխումներ կատարել:

Անցյալ շաբաթվա ընթացքում, մինչ նախագահ Միտերանը հեռուստատեսությամբ ելույթ էր ունենում, կոմոյուտերային տեխնիկների գործադուլը խառնաձփոթ էր առաջացրել Փարիզի օդանավակայանում, իսկ Ռենո ավտոգործարանի հազարավոր բանվորներ երթի էին դուրս եկել Լը Մանս փողոցի երկայնքով: Այդպես ավարտվեց սոցիալական դայֆարներով եւ բառն վիճաբանություններով լի եւս մեկ օր, մեկը բազմաթիվ այն օրերից, որոնք վերջին մեկ ամսվա ընթացքում ցնցում են ամբողջ Ֆրանսիան: Եւ աշխատավարձի հավելում դահանջող կամ, որոշ դեպքերում, արտադրության ժամանակավոր ընդհատումների դեմ բողոքող այդ անկազմակերպ երթերի շուտափույթ ավարտը չի կախտեսվում:

Ֆրանսիայի քաղաքական ու հասարակական գործիչներն այդ խլրտումները համարում են մի փոքր մասնիկը ավելի խորը, առայժմ անբնութագրելի, ճգնաժամի, որը «ողողում» է երկրի քաղաքական, տնտեսական եւ բարոյական կյանքը այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Եւրոպան *«փոփոխության է ենթարկվում ջանցնող առագությամբ»*: Միտերանը մի ամբողջ տարի շարունակ փորձում էր հակակշռել այս դրությունը, իր ելույթներում նշելով, որ եթե նույնիսկ մարդիկ հուսախաբ էին եղել սոցիալիզմից, արդա Եւրոպայի միասնության գործում Ֆրանսիայի կատարած նշանակալի դերը կարող էր տակավին ծառայել որպես ազգային նոր նպատակների իրականացման ներշնչման աղբյուր: Բայց առայժմ այդ ելույթները ոչ մի դրական արդյունք չեն արձանագրել: Թվում է, թե Ֆրանսիայի ստեղծած *«հաջողակ հասարակարգի»* դատկերը շատ վաս ձեւով է աղավաղվել: Ահա թե ինչպես է բացատրում այս իրավիճակը Լոնդոնի Ստրատեգիական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Մայֆլ Դեւարը: *«Մինչեւ այժմ ամեն ինչ լավ էր ընթանում Ֆրանսիայում: Հիմա ծիշ հակառակն է՝ ոչ մի բան լավ չի այնտեղ: Եւ Ֆրանսիացիները իրենց մաղձն են թափում Միտերանի վրա, քանզի այս վերջինը ինքն էլ որոշ իմաստով դարձել է մի ինքնուրույն ինստիտուտ»:*

Տասը տարի գլխավորելով իշխանությունը, Միտերանը (75 տարեկան) այժմ իրոք դժվարանում է վստահություն ներշնչել «ցնորված» Ֆրանսիացիներին, որոնք ըստ *«Ֆիգարո»* թերթի կատարած հատարակական հարցման արդյունքների, պատրաստ են նրա դեմ քվեարկել, եթե այսօր նախագահական ընտրություններ անցկացվեն երկրում: Միտերանը, որը երեք տարուց մի փոքր ավելի ունի ավարտելու իր երկրորդ 7-ամյա իշխանության շրջանը, այժմ Ֆրանսիայի նախագահների պատմության մեջ ամենցածր ժողովրդականությունն է վայելում: Նրա վերջին վարչապետ Էդիթ Կրեսոնը (որն ընդամենը 6 ամիս է, ինչ գրավում է այդ պաշտոնը) նույն վիճակում է:

Իր հեռուստաելույթում Միտերանը նշեց, որ այլ զարգացած երկրներ եւս տնտեսական ճգնաժամ են աղրում: Ֆրանսիայում գործազուրկների թիվը հասնում է 3 միլիոնի (այսինքն ամբողջ աշխատուժի 10 տոկոսը), չափազանց մեծ մի թիվ որեւէ կառավարության համար, որը կանգնած է ընտրությունների նախաշեմին: Նա ակնարկեց նաեւ այն մասին, որ եթե քաղաքական համակարգում ինչ-որ թերություններ կային, արդա դրանք ոչ թե իր կառավարության, այլ Հինգերորդ հանրապետությունում գործող «ինստիտուտների» մեղքով էին, այն հանրապետության, որ Շառլ դը Գոլն էր ստեղծել եւ որին ինքը՝ Միտերանը սկզբից ուեթ դեմ էր եղել: Այնուհետեւ նա առաջարկեց մտցնել սահմանադրական բարեփոխությունների մի ամբողջ շարք: Դրանցից «ամենատպավորիչը» ներկա նախագահական 7-ամյա շրջանի կրճատումն է հինգ տարվա 2 իրարահաջորդ շրջանների կամ 7 տարվա շրջանի դահպանումը առանց, սակայն, վերընտրության իրավունքի: *«Վերջապես 14 տարին ինձ համար էլ բավական երկար է թվում»*, ասաց նա իր համաքաղաքացիներին:

Միեւնույն ժամանակ նա վերսին հիշեցրեց իր ժողովրդին այն խոստումները կամ բարեփոխության առաջարկությունները, որոնք նա կատարել էր 1988-ի վերընտրության ժամանակ: Այդ բարեփոխությունների թվում էին խորհրդարանի իրավասությունների ընդարձակումը, առավել անկախ դատախազության ստեղծումը, հանրաքվեով լուծարվող հարցերի ոլորտի ընդլայնումը եւ քաղաքացիներին սահմանադրական դատարանից օգտվելու ավելի մեծ հնարավորությունների ընձեռումը: Նա տեղեկացրեց, որ մի անգամ եւս փորձելու է բարեփոխել ընտրական համակարգը եւ այն առավել ներկայացուցչական դարձնել: Իր այս «նախաձեռնությունը» քաղաքական հակառակորդների որոշ մասի մոտ բողոքի ալիք բարձրացրեց, քանի որ նրանք դրանում տեսան խոսանավելու եւ 1993-ի ընտրություններին սոցիալիստական կուսակցության համար ավելի նրդատավոր դայմաններ ստեղծելու փորձ:



Պահպանողական հակառակորդ կուսակցությունները անմիջապես զգուշացրին ժողովրդին, որ Միտերանի դատրաստած *«ծուղակը չընկնեն»*: Ֆրանսիական ժողովրդավարական միության (ՖԺՄ) անունից խոսելով, Շառլ Միլլոնն ասաց, *«Նա դատրաստած է բոլոր՝ տնտեսական, սոցիալական եւ բարոյական ասպարեզներում: Նա այժմ փորձում է վերանայել իր հանդգնությունները»:*

Ըստ սովորության, Միտերանը դարձյալ փորձում է խոստումներով գրավել ժողովրդին, քանի որ վերջին երեքնուկեսի ընտրություններին քվեարկողների միայն 40-50 տոկոսն էր ներկայացել տեղամասեր, մի թիվ, որ խիստ անհանգստացնող է:

Նախագահից առաջ Ժակ Շիրակն էլ էր առաջարկել 5-ամյա ժամկետ սահմանել նախագահին: Բայց Միտերանը չի դատրաստվում այդ օրենքը, եթե ընդունվի, կիրառել իր վրա: Նա նույնիսկ չնշեց, թե երբ կգիջի իր դարեսոնը: Ընտրական համակարգում փոփոխություններ մտցնելը ճնշադատության ենթարկվեց գլխավորապես երկու ընդդիմադիր, դահպանողական կուսակցությունների՝ Շիրակի գլխավորած Նեոգոլիստական համախմբում հանուն հանրապետության (ՀՀՀ) եւ Վալերի Ժիսկար դ'Էստենի Ֆրանսիական ժողովրդավարական միության կողմից: Նրանք մտավախություն հայտնեցին, որ Միտերանի ձեռնարկած քայլերը կարող են զրկել իրենց հաղթանակի հասնելու 1993-ի ընտրություններին:

Բացատրելով ստեղծված դրությունը, «Ֆիգարո» թերթի խմբագիրն ու Միտերանի կենսագրության հեղինակ Ֆրանց-Օլիվիե Ժիլբերը ասում է, որ *«նախագահը երկիրը կառավարելու փոխարեն դարզապես փորձում է իշխանությունը չկորցնել»:*

Ներկա ընտրական օրենքների համաձայն, կանաչների կուսակցությունը (նախատեսված 14 տոկոս) եւ ծայրահեղ աջակողմյան Ազգային ճակատը (նույնքան տոկոս) դատշաճորեն չեն ներկայացված խորհրդարանում: Սա նշանակում է, որ քվեարկողների ընդհանուր թվի մոտ 30 տոկոսը ոչ մի դատգամավոր չունի խորհրդարանում:

Շոշափելով սահմանադրական հարցեր, Միտերանը փորձում է արթնացնել ժողովրդի հետաքրքրությունը քաղաքական կյանքի նկատմամբ եւ գրել նրանց հոռետեսական զգացումները: Նա այդպիսով հույս ունի վերականգնել իր կորցրած քաղաքական դիրքը եւ, միգուցե, իր իշխանությունը երկարաձգել մինչեւ ժամկետի ավարտը:

Time, Նոյեմբեր 25, 1991

Իրանին շրջապատող աշխարհը եւ Հայաստանը

Իրանն իր դրացիների բազմատարրության, աշխարհագրական դիրքով եւ կրոնա-էթնիկական առանձնահատկություններով էապես տարբերվում է շրջանի երկրներից: Իրանին սահմանակից է արաբական աշխարհի մաս կազմող Իրաքը, իր տարածային դատահանջներով եւ բնեւական կեցվածքով: Իրանի հետ ընդհանուր սահման ունի «թուրքական աշխարհի» ոգեշնչողը՝ Թուրքիան, իր դարավոր հակամարտություններով: Իրանի հետ միեւնույն սահմանն է կիսում ոչ դակաս հոգեւոր դատճառող հնդկական աշխարհի ծայրամասային հատվածը՝ Պակիստանը: Իրանի արեւելյան սահմանների եզրին է գտնվում Աֆղանստանը՝ իրանական աշխարհի բաղկացուցիչ մասը, իր քաղաքական անհանգիստ եւ փոփոխական կյանքով: Իրանի սահմանային շուրջ 2000 կմ երկարություն ունեցող ափերն են ողողում լարվածության օջախ հանդիսացող Պարսից եւ Օմանի ծոցերը, եւ վերջապես Իրանին սահմանակից է փլուզված Խ. Միությունը, որտեղից այն մոտ ունի դեմի Հայոց աշխարհի մաս կազմող Հայաստանի Հանրապետություն եւ նրա միջոցով՝ քրիստոնեական աշխարհ:

Իրանի համար թերեւս ամենակայուն եւ ադահով սահմանը մինչեւ վերջերս հյուսիսային հատվածն էր, որը, սակայն, այսօր երերում է եւ անկայուն:

Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ Իրանին սահմանամերձ շրջաններում ադրում են արաբներ, քուրդ, ազերիներ եւ էլի ուրիշ բուրքական ցեղեր, բելուջներ եւ այս կամ այն հարեւան դեսության հետ էթնիկական եւ մշակութային ընդհանրություններ ունեցող այլ ազգություններ, որոնք դոտենցիալ անջատողական ուժ են համարվում Իրանի համար: Իրանի անդրսահմաններում ադրող սուննի-մահմեդականները նույնդես քիչ հոգեւոր չեն դատճառում երկրի իշխանություններին:

Հաշվի առնելով վերը նշվածը, ներկայումս Իրանի եւ հարեւան երկրների հետագա գոյակցության հարցը դառնում է օրակարգի խնդիր: Կասկածից վեր է, որ իրանա-իրաքյան հակամարտությունները կշարունակվեն նաեւ հետագա տարիներին: Այդ հարաբերություններում լարվածության բուլացումը կարող է դայմանավորված լինել միայն Իրաքում ժողովրդավարական ուժերի հաղթանակով եւ քաղաքականության մեջ շիա-մահմեդականների ազդեցության ոլորտի բուլացումով, որը սակայն մոտ ապագայի խնդիր չէ:

Ինչդես ադասվում էր, մինչ այդ համեմատաբար բարենդաստ թվացող հարաբերությունները Թուրքիայի հետ, վերջինիս կողմից Ադրբեջանի անկախության ճանաչումից հետո մտնում է նոր ավելի լարված փուլ:

Աֆղանստանի ադորիյան հեղաշրջումից հետո Մոսկվայի աջակցությամբ Քաբուլում իշխանության գլուխ անցած կոմունիստական վարչակարգը, որ չնայած վերջին շրջանում տեղի ունեցող արմատական փոփոխություններին, շարունակում է գոյատեւել, բազմաթիվ հոգեւոր է դատճառում Իրանի իսլամական հանրապետության իշխանություններին: Հեղաշրջումից հետո Իրանն ակամայից դարձավ աֆղանական ընդդիմադիր ուժերի հենակետ:

Նկատի ունենալով Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքը, Իրանը չի կարող անտեսել հյուսիսում ստեղված այն տերությունը, որի դատառնալիքը մշատես կախված է եղել երկրի վրա: Սակայն, ցարական Ռուսաստանի եւ այժմ նաեւ կոմունիստական վարչակարգի անկումից հետո այդ դատառնալիքի նրվազեցումով հանդերձ, ի հայտ են եկել նոր հոգեւոր կաղված անկախության ուղին բռնած Խ. Միության հարավային եւ մահմեդական հանրապետությունների հետ: Իրանին խոր անհանգստություն է դատճառում նաեւ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը, որն այս կամ այն կերդ անդրադառնում է Իրանի Ազերբայջան նահանգի ազգաբնակչության վրա: Եւ բոլորովին էլ դատահական չէ, որ Թեհրանը, ըստ վերջերս Խ. Միությունում կատարած Իրանի արտգործնախարար Վելայաթիի հայտարարության, ցանկություն է հայտնել այդ կնճռի լուծման գործում հանդես գալ միջնորդությամբ:

Ինչդես արդեն նշել ենք, հանձին Հայաստանի Հանրապետության, Իրանի առջեւ «դատուհան» է բացվում դեմի քրիստոնեական աշխարհ: Մեղրու հատվածում հայ-իրանական սահմանը Իրանին ուղիղ ճանապարհ է ադահովում դեմի Սեւ ծով: Մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ քրիստոնեական աշխարհով Պարսից ծոց ձգվող ճանապարհն անցնում է Մեղրու միջանցքով: Իսկ այդ միջանցքը Հայաստանի համար ներկայիս չընդհատվող շրջափակումների դայմաններում կենսական նշանակություն է ձեռք բերել: Մեղրին նաեւ Ադրբեջանը եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունն իրար միացնող կամուրջ է: Հենց այդ կամրջով դեմի Նախիջեւան կաղն ադահովելու համար է, որ Բաքուն ժամանակ առ ժամանակ ստիդված է լինում հրաժարվել Հայաստանի շրջափակումից: Չընայած վերջերս Բաքուն գտել է նաեւ դրա ելքը եւ, Հայաստանը շրջափակված վիճակում դահելով հանդերձ, ինքնավար հանրապետության հետ հաղորդակցվում է Իրանի տարածքով:

Վերլուծելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ ստեղծված նոր իրավիճակում հայ-իրանական չմիջնորդավորված հարաբերությունների հարցը, 70-ամյա դադարից հետո, երկկողմանի անհետաձգելի քննարկման առարկա է դառնում:

Գ. ՍՈՍԲԵԼՅԱՆ

Օզալի ուղերձը հրեաներին

Թուրքական հատուկ աղբյուրներից տեղեկանում ենք, որ նոյեմբերի 22-ին, Թուրքիայի հանրապետության նախագահ Թուրգուտ Օզալը վաղ առավոտյան արբանյակի միջոցով կապվել է Բալթիմորի Հրեական Ֆեդերացիաների խորհրդի հետ:

Իսպանիայի հրեաների Օսմանյան կայսրություն կատարած գաղթի 500-րդ տարեդարձի առթիվ խորհրդին հղված հատուկ տեղեկագրության մեջ Օզալը ողջունում է աշխարհի տարբեր կողմերից հրավիրված 3000 հրեաներին եւ «խաղաղություն» մաղթում: Ուղերձում հատկապես նշվում է Իսրայելի գոյատեւելու իրավունքը այն սահմաններում, որոնք մինչեւ օրս ճանաչվել են բոլոր երկրների կողմից, ինչպես նաեւ պաղեստինցիների արժանավայել ապրելու իրավունքն այն հողերում, որ ժառանգել են իրենց պապերից: Թուրգուտ Օզալի հատուկ տեղեկագրության մեջ ասվում է նաեւ, թե «ԱՄՆ-ն շատ ջանքեր գործադրեց Միջին Արեւելքի խաղաղ համաժողովի պնդկացման համար: Այժմ, երբ տոնվում է Իսպանիայի հրեաների Թուրքիա գաղթելու 500-ամյակը, առավել եւս ցանկալի է, որ Միջին Արեւելքի խաղաղությունը մնայուն եւ արդար լինի»: ■

Թերի Ուայթը գերհատուկ բանագնաց է

Ի վերջո ո՞վ է Թերի Ուայթը, որը հինգ տարի դատանդ էր Բեյրութում եւ օրերս ազատ արձակվեց ամերիկացի Թոմաս Սանդերլենդի հետ միաժամանակ: Ջերմացնող ժդիտով այդ բարձրահասակ մորուքավորը դատշաճորեն անգլիական եկեղեցու հովվադետի՝ Քենթբերիի արքեդիսկոդոսի բանագնացն էր, սակայն, արժանահավատ տարբեր աղբյուրների համաձայն, նա եղել է նաեւ Անգլիայի հատուկ ծառայությունների մի լուրջ թղթակից, նախքան կենտրոնական հետախուզության կողմից հավատագրվելը: Նա կանոնավոր կապ էր դահդանում գնդապետ Օլիվեր Նորթի՝ Սդիտակ տան Անվտանգության խորհրդի հայտնի անդամի եւ Իրանգեյթի գլխավոր գործող անձի հետ: Նորթը, իրոք, գլխավոր դեր է խաղացել այդ մութ գործում, որի ընթացքում իսրայելցիների միջնորդությամբ զենքեր էին հանձնել Իրանին՝ ամերիկացի դատանդների ազատման դիմաց: Միաժամանակ, այդ եկամուտներից ֆինանսավորել էին Նիկարագուայի հակասանդինիստ ապստամբներին:

Թերի Ուայթը, այս կամ այն չափով գիտակցելով, կարեւոր դեր է խաղացել մի բարդ գործողության մեջ, որի մասին ինքը, անկասկած, ամեն ինչ չի իմացել: Նա կարողացել է հասնել այն բանին, որ ազատ արձակվեն բազմաթիվ դատանդներ, ասում են՝ բանակցելու իր տաղանդի շնորհիվ: Իրականում դա եղել է հատկապես հակատանկային «Թաու» հրթիռների շնորհիվ, որ ամերիկացիները գաղտնաբար մատակարարում էին Իրանին: Ուայթը հավանաբար դարձել է իրանական ֆրակցիաների դայքարի զոհը: Իրանգեյթի գլխավոր դեմք Ռաֆսանջանիի հակառակորդները, իրոք, գործը բացահայտել են լիբանանյան մի լրագրի միջոցով: Քանի որ դայմանագիրը չէր կատարվել, եւ խոստացված ամբողջ զենքը չէր առաքվել, Հեզբոլլահ շարժումը եւ դրա իրանական դաշնակիցները որոշել էին Թերի Ուայթին դատանդ վերցնել: Այն փոքրիկ հաղորդիչը, որ նա կրում էր իր վրա, որեւէ կերդ չի օգնել իրեն: Հինգ տարի դահանջվեց, որդեսզի այդ գերհատուկ բանագնացը ազատվի իր առեւանգիչների ճանկերից:

«Լը Մոնդ», 23 նոյեմբեր 1991

digitised by A.R.A.R.@

Ելցինի ամբողջ խաղագումարը

Աղետալի վիճակին դեմ հանդիման, նա հույս է կապում իր տնտեսական բարեփոխման հետ

«Խանութներում գնելու բան չկա, բայց դեռ կարելի է գնել խանութներ», այս բաբաք այսպիսին էր *«Իզվեստիայի»* վերնագրերից մեկը: Եւ բերն իրավացի է. միութենական դաշնագիրը պետք է կնքվի, Ռուսաստանը ձեռնարկում է իր տնտեսական բարեփոխումները, եւ Մոսկվան ուզում է արագությամբ ամենից առաջ անցնել զանգվածային մասնավորեցման շնորհիվ, բայց վիճակը դարձյալ աղետալի է:

Եւ, մանավանդ, մոտակա բարելավման հույս չկա: Երկու թիվ լուսաբանում է հիմնահարցի բարդությունը: Բորիս Ելցինի հրապարակած առաջին միջոցառումների թվում է նրվազագույն աշխատավարձի բարձրացումը, որը այսուհետեւ կազմելու է 200 ռուբլի: Միեւնույն պահին հաղորդակցության ուղիների նախարարությունն արձանագրում է, որ ինքը անզոր է վճարելու իր պարտքերը, եւ հայտարարում է, որ այսուհետեւ հարկ կլինի տոմսերի դիմաց վճարել փոխարկելի վալյուտայով: Ներկա գներով դա Բրեստ-Փարիզ ճանապարհի գինը կդարձնի մոտ 30 հազար ռուբլի: Դրա համար միջին աշխատավարձ ստացողը պետք է աշխատի տասը տարի:

Եւ երբ դրամական այդ պայթյունը իրոք տեղի ունենա, ապա ռուբլին բերեւս մնա միայն Բորիս Ելցինի Ռուսաստանում: Նախկին ԽՍՀՄ-ի մնացած մասում երբեմնի հանրապետությունները ստեղծում են ազգային դրամանիշեր, որոնք մրցակցելու են իրար հետ:

Այս բոլոր երեւույթները, անշուշտ, խախտում են հոկտեմբերին հանդիսավորապես ստորագրված տնտեսական ընկերակցության պայմանագիրը: Այդուհանդերձ, Միխայիլ Գորբաչովը ստիպված է իրեն ուրախ ցույց տալ վաս պայմաններին հակառակ: Այսօր ոչ ոք չի համարձակվի գուշակել *«ինքնիշխան պետությունների միության»* սահմանները, որը տեսականորեն *«ԽՍՀՄ-ի իրավաժառանգորդն է»*, եւ որի նախագահը հույս ունի լինել Գորբաչովը: Միայն յոթ հանրապետություն է մասնակցում այդ արկածախնդրությանը եւ, մանավանդ, Ուկրաինան չի մասնակցում դրան: Ուկրաինան նաեւ դեմ է ինքը նախկին հանրապետությունների եւ «Հրաբալի յոթնյակի» համաձայնությանը, ըստ որի ԽՍՀՄ-ը պետք է վճարի իր արտաքին պարտքը:

Գերմանական *«Շտեռն»* շաբաթաթերթին տված հարցազրույցում նախկին ԽՍՀՄ-ի նախագահը դեռեւս ուզում է իրեն հանգիստ ցույց տալ. **«Միությունը կլինի կոնֆեդերացիա՝ կոնֆեդերալ եւ ժողովրդական մի պետություն, ունենալով ընդհանուր զինված ուժեր, տարածք, քաղաքացիություն, կենտրոնացված արտաքին քաղաքականություն եւ միասնական շուկա, ինչպես նաեւ բանկերի, դրամի եւ գների միասնություն»**:

Այդուհանդերձ, կան բազմաթիվ հարցականներ:

Կոնֆեդերացիա՞: Գուցե, բայց այն չի ունենա նույնիսկ սեփական սահմանադրություն, դրան փոխարինելու են միութենական դաշնագիրը եւ սեպտեմբերին խորհրդարանի ընդունած մարդու իրավունքների հռչակագիրը:

Ընդհանուր զինված ուժե՞ր: ԽՍՀՄ պաշտպանության նախարար Եվգենի Շապոշնիկովը հայտարարել է, որ զինված ուժերը «միասնական են եւ անբաժանելի»: Իրոք, բայց միութենական դաշնագիրը նախատեսում է նաեւ «ազգային կազմավորումներ», որոնցից Ուկրաինան պատրաստվում է ստեղծել, մինչդեռ Ադրբեջանը, Վրաստանը եւ Մոլդովան իրենց տարածքներում հանգիստ սեփականազրկում են կարմիր բանակը:

Քաղաքացիությո՞ւն: Սկզբում դա կլինի երկակի բնույթի՝ խորհրդային եւ հանրապետական: Եւ ծագում են նոր դժվարություններ: Օրինակ, Ելցինի «կայսրության» ներսում նախկինում անարդարացիորեն ինքնավար հորջորջված հանրապետությունները պահանջում են Ֆեդերալ կարգավիճակ, հոչակում իրենց անկախությունը, երբեմն զենքի դիմում, ինչպես չեչենները:

Կենտրոնացված արտաքին քաղաքականություն՞: Դա Էդուարդ Շեւարդնաձեի հիմնական զբաղմունքն է, որը վերադարձել է արտգործնախարարություն: Բայց դա անչափ ծանր կլինի նույնիսկ նրա համար:

Բանկային միությո՞ւն, դրա՞մ, գնե՞ր: Գրչի մեկ հարվածով Բորիս Ելցինը ջնջեց այս ամենը: Հասատ է մեկ բան. Ռուսաստանը սկսում է բարեփոխումները, եւ եթե մյուսները ուզում են մասնակցել, ապա դա կլինի ռուսների պայմաններով: Նավթի, գազի, ոսկու եւ ադամանդի շնորհիվ Բորիս Ելցինը իր ձեռքին է կենտրոնացնում նախկին ԽՍՀՄ-ի հիմնական հարստությունը: Այս ամենը անցնում է Ռուսաստանի վերահսկողության տակ: Համենայն դեպս, թղթի վրա, քանզի իրականում կասկածները առկա են, ազգային փոքրամասնությունները զբաղեցնում են Ռուսաստանի տարածքի 60 տոկոսը եւ բնաղաբարների մի զգալի մասը: Եւ երբ վերջերս բաբաք պատասխանատուներից մեկը հայտարարեց, թե **«Ռուսաստանն այն է, ինչ մնում է Թաթարիայից, Բաշկիրիայից եւ Յակուտիայից դուրս»**, դա սոսկ սրամտություն չէր: Համենայն դեպս, թղթի վրա ամեն ինչ լավ է ընթանում Բորիս Ելցինի համար: Նավթից բացի, որի արտահանման բոլոր թույլտվությունները վերանվում են այս ձմեռ Ռուսաստանը գոնե տաքացնելու համար, բացի ոսկուց եւ ադամանդից, նա իր ձեռքն է առել ԽՍՀՄ Ֆինանսների նախարարությունը, ներառյալ դրամի թողարկումը: Անկասկած, դա միակ միջոցն է ուժ տալու ռուբլի կոչվող մեծ հիվանդին: Բայց դա ծայրահեղ միջոցառում է, երբ փորձում են մեկ հարվածով մտցնել ռուբլու ներքին փոխարկելիություն:

Մյուս կարեւոր տարրն այն է, որ Ռուսաստանը ազատականացնում է արտաքին առեւտուրը: Գաղափարը դուրեկան է, դա միակ միջոցն է ապրանքներ, նույնիսկ երկարատեւ ներդրումներ ստանալու համար, քանզի եկամուտների ստացումը վալյուտայով երաշխավորված է: Բայց դեռեւս չի խոսվում գների ազատականացման մասին, որը բարեփոխման անխուսափելի սկիզբն է, իսկ մասնավորեցումը ձգձգվում է:

Իր նոր կառավարությունը կազմելու համար Բորիս Ելցինը ապահովել է լիիրավան կառավարում: Նա իրեն երաշխավորել է երիտասարդ մասնագետներով, որոնց մեծ մասը ծանոթ են Արեւմուտքի տնտեսագիտությանը: Դրան հայտնի է, որ ինքը խաղի մեջ է դնում իր ամբողջ խաղագումարը: Եթե հաջողության հասնի, նա հերոս կդառնա, նույնիսկ ավելի մեծ, քան եղել էր օգոստոսի 19-ին բարիկադների վրա տանկերի առաջ կանգնելով, հակառակ դեպքում. Մոսկվայի գերբարեփոխական խաղաթղթե Գավրիիլ Պոպովի կանխատեսման համաձայն, **«ժողովուրդը, որը չափից ավելի է սպասել, կերջվի երրորդ ուժի կողմը, դա կլինի Ֆաշիզմը»**:

Լը Պու�, 23 նոյեմբերի 1991

Ամրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը սկսեց ցուցադրվել Ֆրանսիայում

«Ազգ»-ի սեպտեմբերի 28-ի համարում մեր թղթակիցների հարցազրույցն էին տպագրել Ամրի Վերնոյի հետ, ուր հիմնականում խոսվում էր «Մայրիկ» ֆիլմի մասին:

Նոյեմբերի 27-ին, Ֆրանսիայի ամենամեծ 800 կինոդահլիճներում միաժամանակ սկսվեց ցուցադրվել նրա «Մայրիկ» ֆիլմի առաջին մասը: Ֆիլմի երկրորդ մասը պիտի ցուցադրվի 1992 թ. հունվարի 15-ին:

Այս օրերին Ֆրանսիական մամուլի գլխավոր նյութերի մաս է կազմում Հայկական Ցեղասպանությունը՝ Ամոս Մալայանի պատրաստած վերոհիշյալ երկու ֆիլմերի առթիվ: Ֆրանսիական հեռատեսիլի բացառիկ ասողերի համար տրամադրված հատուկ հաղորդում՝ Star 90-ը լայն տեղ է տվել հայազգի կինոռեժիսորին:

Իսկ Ֆրանսիական հեռուստատեսության առաջին կայանը մեծ գումարներ ծախսելով, վերակենդանացրել էր Մալայանների 1930-ական թվականների վերնաբաժիկի աշխատանոց խաղուրը, ներկայացնելով այն եւրոպայի Ֆրանսախոս հեռուստադիտողներին:

Նոյեմբերի 24-ին երկրորդ կայանի՝ Antenne 2-ի հաղորդման մեջ նաեւ հնչեցին Ամոս Մալայանի մանկության հուշերը, ցեղասպանության հարցը, հայ ազգի զանազան մտորումները եւ այլն: Իսկ France Inter, Radio France, France Culture, Energie, Radio Luxembourg կայանները գրեթե ամեն օր տարբեր հարցազրույցներ են անում, առիթ օգտագործելով նույն նյութը՝ Ամրի Վերնոյի «Մայրիկ»-ը եւ Հայկական Ցեղասպանությունը:

Ստորեւ՝ «L'Էքսպրես» շաբաթաթերթից առնված մի նյութ:

Ամրի Վերնոյը պերճախոս է, հնարամիտ ու ծարպիկ: Ֆրանսիայում 1951 թվականից լինելով վարպետ կինոռեժիսոր, 1985 թվականին գրելու երջանկությունը բացահայտեց մեկ նախադասությամբ. **«Նա շուտով կմահանա»**: Նա դրանից ստեղծեց մի մեծ վեպ՝ «Մայրիկը», հետո մի մեծ ֆիլմ, որի առաջին մասը կցուցադրվի այս շաբաթ, իսկ երկրորդը հունվարի կեսերին: **«Ես պատկերացնում էի ինքնուրույն ժամանոց ֆիլմ, բայց հանեցի 300 էջ»**, ասում է Վերնոյը:

«Մայրիկ»-ը նրա պատմությունն է, իր ընտանիքի եւ ժողովրդի պատմությունը: Ամրի Վերնոյը, որն այդ ազգանունը գտել է Ֆրանսիայի քարտեզի վրա, իրականում կոչվում է Ամոս Մալայան: Հայաստանից նա պահպանել է սոսկ տառապանքի պատմություններ եւ իր մայրենի լեզուն: Ֆիլմն սկսվում է թուրքերի տեղահանած գաղթականների շարքերի ցուցադրումով: Մալայանները հասել են մինչեւ Մարսել, Պարադի փողոց: Երիտասարդ Ամոսը սկսում է աշխատել որպես ծովային ինժեներ:

Օմար Շարիֆը խաղում է հոր դերը մի հազվագյուտ ճարտարությամբ, Կլաուդիա Կարդինալեն «Մայրիկն» է՝ մայրը: Սորամույրներով շրջապատված երեխան ապրում է ներգաղթյալի իր կյանքը, զգալով սանդղահարթակի հարեւանի նողկալի ռասիզմը, հացագործի ջերմ հյուրընկալությունը, խայտաբղետ ցուցափեղկերը, փողոցների բազմաժխոր շուկայի աշխույժը: Այն օրը, երբ նա ի վերջո հաջող ընտանիքներ է հանձնում, ծնողները վաճառում են իրենց ամուսնական մատանիները, որպեսզի նրա համար պատվիրեն մի անվանական մատանի, որը «քաշով մեկ սեր է»:

Ամրի Վերնոյը ստեղծել է **«Կովը եւ բանտարկյալը»**, **«Սիցիլիացիների տոհմը»**, **«Մորֆալուները»** եւ բազմաթիվ այլ ֆիլմեր: Նա կարող էր շարունակել նույն ոգով, բայց նախընտրեց հինգ տարի աշխատել «Մայրիկ» ֆիլմի վրա, գրել սցենարի 43 տարբերակ, կրճատել, հղկել: Դրա շնորհիվ ստեղծվեց նախապատերազմական տարիների պայծառություն ունեցող մի ֆիլմ՝ պոեզիայի եւ հուզիչ տեսարանների առատությամբ: **«Դա երազ է: Մորս հիշատակին»**, ասում է Վերնոյը: Անվանական մատանին մինչեւ օրս նրա ձկույթին է: ■

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի մարզական համաստեղությունը այցելեց Ֆրանսիա

«Հայաստան 2000» հայկական մարզական ասոցիացիայի հրավերով մեկ շաբաթ Ֆրանսիայում էր գտնվում Հայաստանի մարզական համաստեղությունը: Պատվիրակության կազմում էին օլիմպիական չեմպիոններ Հրանտ Շահինյանը, Ալբերտ Ազարյանը, Վլադիմիր Ենգիբարյանը, Նիկիտա Սիմոնյանը, Լեւոն Ջուլֆալակյանը: Աշխարհի, եւրոպայի, ԽՍՀՄ չեմպիոններ, գավաթակիրներ, օլեկոդակիրներ Յուրի Սարգսյանը, Օգսեն Միրզոյանը, Ռոբերտ Էմմիյանը, Վարդան եւ Իսրայել Միլիսոյանները, Գուրգեն Թուքխալյանը, Գագիկ Ղազարյանը, Դավիթ Համբարձումյանը, Մնացական Իսկանդարյանը, Գառնիկ Հովհաննիսյանը, Բագրատ Բուռնազյանը, Ալեքսանդր Կովալենկոն, Արմեն Սարգսյանը եւ ուրիշներ: Փարիզի մերձակայքում գտնվող Իսի Լը Մուլինո քաղաքում պատվիրակությանը միացավ նաեւ օրերս Ֆրանսիայի բաց առաջնությունում հաղթանակ տարած կիրովականցի ըմբիշ Ստեփան Սարգսյանը, որը 2 ամիս պայմանագրով մարզիչ է աշխատում այնտեղ: Նոյեմբերի 23-ին տեղի ունեցած հանդիսավոր երեկոյին մեծ թվով հանդիսականներ էին ներկա, հիմնականում՝ մեր հայրենակիցներ, որոնց թվում նաեւ անվանի մարզիկներ, մասնավորապես, եւրոպայի նախկին չեմպիոն, բռնցքամարտիկ Ժակ Հայրապետյանը, բռնցքամարտի Հայաստանի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Միխայել Փափազյանը, նախկին արարատցիներ, հայր եւ որդի Նորայր ու Արքուր Դեմիրճյանները: Երեկոն վեր էր ածվել շոու-հանդեսի եւ նրկարահանվում էր Ֆրանսիայի հեռուստատեսության կողմից: Այն վարում էր հայտնի մեկնաբան Մարկ Մաուրին: Հանդիսականները հատկապես մեծ ջերմությամբ ընդունեցին Հրանտ Շահինյանի եւ Ռոբերտ Էմմիյանի ելույթները:

Մեկ օր պատվիրակությունն անցկացրեց Փարիզի հանգստյան եւ մարզական համալիրում, որը չեմպիոններ պատրաստելու դարբնոց է եւ լավագույնն է եւրոպայում: Ամբողջ շախմատով ներկա եղավ նաեւ առաջնության շրջանակներում «Իսի Լը Մուլինո»-ի հերթական խաղին, որի կազմում հանդես է գալիս նաեւ «Արարատ»-ի նախկին ավագ Ամոս Խաչատրյանը: Խորհրդանշական է, որ առաջին հարվածը կատարեց Նիկիտա Սիմոնյանը: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի: Պատասխան գոլը խփեց Ամոս Խաչատրյանը: «Իսի Լը Մուլինո»-ն կրկին առաջատարների թվում է:

Հայաստանցի ասողերի այցելությունը Ֆրանսիա մեծ արձագանք էր առաջացրել եւ ակտիվորեն լուսաբանվում էր տեղի լրատվության միջոցներում: Սիմոնյանը, Ենգիբարյանը, Էմմիյանը հանդես եկան հայկական ռադիոյով:

Ռոբերտ Էմմիյանին եւ ինձ հարցազրույցի հրավիրեց Ֆրանսիայի «Էկիպ» մարզական հանրահայտ թերթը:

«Հայաստան-2000» մարզական ասոցիացիայի նախագահ Աբրահամ Հայրապետյանի ջանքերը ապարդյուն չանցան: Մեր պատվիրակության այցելությունը խանդավառություն առաջացրեց տեղի հայկական համայնքում, եւ մայր հայրենիքի հետ ամրակապվելու մի նոր կամուրջ կառուցվեց:

Սլավա ՍԱՐԳՍՅԱՆ
Մարզական մեկնաբան

Հայաստանի սամբիստները՝ առանձին թիմով

Սամբո ըմբշամարտի միջազգային Ֆեդերացիան պառակտվել եւ 2 մասի է բաժանվել: Կողմերը կատաղի պայքար են ծավալել միմյանց դեմ եւ նույնիսկ որոշել են յուրաքանչյուրն առանձին աշխարհի իր առաջնությունն անկացնի, մեկը Կանադայում, մյուսը Ֆրանսիայում: Հայաստանի սամբիստները (կանայք եւ տղամարդիկ) իրենց հերթին որոշել են առաջին անգամ առանձին թիմերով մասնակցել Ֆրանսիայում դեկտեմբերի 7-ին սկսվելիք աշխարհի առաջնությանը եւ այդ կապակցությամբ այսօր մեկնեցին Փարիզ: Ճիշտ է, գեղեցիկ սեռի մեր ներկայացուցիչներն այս անգամ լիարժեք թիմով հանդես չեն գա: Ասպարեզ դուրս կգան միայն 3 աղջիկներ, որոնք այլի են ընկել երիտասարդական մրցումներում, իսկ ահա տղամարդկանց մեր ընտրանին բավականին զորեղ է: Մրցումների մեկնած 8 սամբիստներից շատերը տիտղոսակիրներ են, եւ մենք իրավունք ունենք ոսկե մեդալներ ակնկալել նրանցից: Հայաստանի մարզական պատիվը պաշտպանողների թվում են լինելու աշխարհի եռակի չեմպիոններ, կումայրեցի Գուրգեն Թուքխալյանը, կիրովականցի Գագիկ Ղազարյանը, անցյալ տարվա աշխարհի երիտասարդների չեմպիոն, երեւանցի Վարդան Ոսկանյանը, ԽՍՀՄ ժողովուրդների ամառային 10-րդ սպարտակիադայի չեմպիոն, կիրովականցի Հովհաննես Սանուկյանը եւ ԽՍՀՄ այս տարվա երիտասարդների չեմպիոն, երեւանցի Արքուր Գրիգորյանը:

Ֆրանսիայում կայանալիք աշխարհի առաջնությանը ԽՍՀՄ-ի նախկին հանրապետություններից առանձին թիմերով մասնակցել նաեւ Վրաստանի եւ Մոլդովայի հավաքականները: Հենց առաջնության ընթացքում էլ տեղի կունենա միջազգային Ֆեդերացիայի կոնգրեսը, որի աշխատանքներին կմասնակցի նաեւ մեր ներկայացուցիչը եւ որտեղ կքննարկվի միջազգային Ֆեդերացիայի անդամ դառնալու Հայաստանի Ֆեդերացիայի խնդրանքը:

Փաստորեն քայլայվել է նաեւ սամբո ըմբշամարտի միութենական Ֆեդերացիան: Համենայն դեպս, մի քանի հանրապետությունների Ֆեդերացիաներ հանդես են եկել համատեղ դիմումով, որտեղ նշում են, որ ԽՍՀՄ Ֆեդերացիան այլեւս չի կարող ղեկավար մարմին հանդիսանալ: Այսուհետ յուրաքանչյուր Ֆեդերացիա իրեն իրավունք է վերապահում ինքնուրույն մասնակցելու միջազգային որեւէ կազմակերպության աշխատանքներին, հանդես գալու ցանկացած պաշտոնական մրցաշարում: ■

Վրաստանի թիմը կմեկնի Բարսելոն

Վրաստանի թիմը Բարսելոնի 25-րդ օլիմպիական խաղերում հանդես կգա ինքնիշխան պետությունների միության ազգային օլիմպիական կոմիտեի միացյալ պատվիրակության կազմում: Այդ մասին «ԻՏ»-ին հայտարարեց Վրաստանի օլիմպիական կոմիտեի փոխնախագահ Պատա Նացվլիշվիլին: Անցյալ շաբաթ նա հանրապետության ազգային օլիմպիական կոմիտեի այլ ներկայացուցիչների հետ գտնվում էր Մոսկվայում, ուր կայացել էր ԽՍՀՄ օլիմպիական կոմիտեի եւ ինքնիշխան հանրապետությունների պետկոմիտեների խորհրդակցական հանդիպումը:

Դեկտեմբերի 15-16-ին Թբիլիսիում նախատեսված է ինքնիշխան պետությունների ազգային օլիմպիական կոմիտեների ղեկավարների հանդիպում: Կքննարկվեն դրոշի, օրհներգի, ազգային համազգեստի հարցեր: Հունվարին Լոզանում տեղի կունենա հանդիպում միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահի հետ: ■

Բաքինը վարում է Սուրեն ԲԱԴԱԼՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Մեջլիսը վստահության քվե տվեց Դեմիրելի կառավարությանը

Թուրքիայի հանրապետության նախագահ Թուրգուտ Օզալի կողմից նախարարների ցուցակի հաստատումից հետո վարչապետ Սուլեյման Դեմիրելը «Ճշմարիտ ուղի» եւ Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցությունների մասնակցությամբ կազմավորված կոալիցիոն կառավարության ծրագիրը նոյեմբերի 25-ին ներկայացրեց Մեջլիսի ուշադրությանը: Վստահության քվե ստացող կառավարության ծրագրի քննարկումը, որն, ըստ սահմանադրության, հնարավոր է միայն ներկայացնելուց 48 ժամ հետո, Մեջլիսում տեղի ունեցավ նոյեմբերի 28-ին եւ, ինչպես նախատեսում է սահմանադրությունը, քննարկումից 24 ժամ հետո օրակարգում դրվեց կառավարությանը վստահության քվեի հարցը: Քվեարկությունը կայացավ նոյեմբերի 30-ին: Քվեարկությանը մասնակցեցին մեջլիսի 450 պատգամավորներից 444-ը, որոնցից 280-ը կողմ քվեարկեցին, իսկ 164 պատգամավորներ դեմ: Այսպիսով, Դեմիրելի կոալիցիոն կառավարությունը արժանացավ Մեջլիսի վստահությանը:

Բացի «Ճշմարիտ ուղի» եւ Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության պատգամավորներից, կառավարությանը վստահության քվե տվեցին նաեւ Մեջլիսում 19 տեղ ստացած Ազգայնական աշխատանքային կուսակցության պատգամավորներից 15-ը: Ալփարսլան Թյուրքեշի գլխավորությամբ: Ի դեպ, նշենք, որ վերոհիշյալ կուսակցությունը ընտրություններից առաջ ինքնալուծարքի ենթարկվելով Մեջլիսի ընտրություններին մասնակցել էր Նեջմեդդին Էրբաքանի Բարություն կուսակցության կազմում: Բայց Մեջլիսում տեղեր ստանալուց հետո Թյուրքեշն ու նրա կուսակցության անդամները դարձեալ



դուրս հայտարարեցին Բարության կուսակցության շարքերից դուրս գալու մասին եւ ըստացան անկախ պատգամավորի կարգավիճակ: Օգտվելով առիթից, ասենք, որ կառավարության ծրագրին դեմ են քվեարկել «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավորները Մեսութ Յըլմազի, Բարության կուսակցությանը՝ Նեջմեդդին Էրբաքանի եւ Դեմոկրատական ձախակողմյան կուսակցության պատգամավորները՝ Բյուլենթ Էջեւիթի գլխավորությամբ: Այնուամենայնիվ, Դեմիրելի կառավարությունը, որին բավարարում էր ձայների հարաբերական մեծամասնությունը, ստանալով 280 ձայն, գերազանցեց սդասելիները: Ստորեւ ներկայացնում ենք Դեմիրելի կառավարության նախարարների կաբինետի ցուցակը:

Վարչապետ՝ Սուլեյման Դեմիրել, պետական նախարարի եւ վարչապետի տեղակալ՝ Էրդալ Ինյոնյու, պետական նախարարներ՝ Զավիթ Չաղլար, Թանսու Չիլլեր, Էֆրեմ Զեյհուն, Ամրն Գյոնեն, Գյոքբերք Էրգենեքոն, Օրհան Քիլերջիօղլու, Օմեր Բարութչու, Մեհմեթ Ալի Յըլմազ, Շերիֆ Էրջան, Մեհմեթ Բաբալը («Ճշմարիտ ուղի» կուսակցությունից), Իբրահիմ Թեզ, Գյուլեր Իլերի, Մեհմեթ Քահրաման, Էրման Շահին (Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցությունից): Արդարադատության նախարար՝ Սեյֆի Օֆբայ (Ս. դ.), պաշտպանության նախարար՝ Նեւզաթ Այազ (Ճ. ռ), արտգործնախարար՝ Հիքմեթ Չեթին (Ս. դ.), ներքին գործերի նախարար՝ Իսմեթ Սեզգին (Ճ. ռ.), լուսավորության նախարար՝ Քյոքսալ Թոփբաշ (Ճ. ռ.), առողջապահության նախարար՝ Յըլդըրըմ Աֆբունա (Ճ. ռ.), Ֆինանսների նախարար՝ Սյումեր Օրալ (Ճ. ռ.), հաղորդակցության նախարար՝ Օնուր Քոմբարաջըբաշը (Ս. դ.), արդյունաբերության նախարար՝ Թահիր Քյոսե (Ս. դ.), գյուղատնտեսության նախարար՝ Նեջմեթդին Չեւիքի (Ճ. ռ.), էներգետիկայի նախարար՝ Էրսին Թարալլաը (Ճ. ռ.), տրանսպորտի նախարար՝ Յաշար Թոփչու (Ճ. ռ.), աշխատանքի նախարար՝ Մեհմեթ Մոդուլբայ (Ս. դ.), մշակույթի նախարար՝ Ֆիֆրի Սաղլար (Ս. դ), զբոսաշրջության նախարար՝ Աբդյուլքադիր Աբեբ (Ս. դ.), անհատականացման նախարար՝ Վեֆա Թանըր (Ճ. ռ.), բնակտեղիանության նախարար՝ Դողանջան Աֆյուրեք (Ճ. ռ.): ■

Մուբալիբովը հրավիրվեց Պակիստան

Ադրբեջանի նախագահ Այազ Մուբալիբովը Պակիստան այցելելու հրավեր ստացավ: Այդ մասին դեկտեմբերի 2-ին հաղորդեց նախագահի մամլո ծառայությունը, վկայակոչելով Մուբալիբովին հղած Պակիստանի վարչապետի ուղերձը:

Հեռագրի մեջ ասվում է, որ Ադրբեջանական հանրապետության նախագահի այցը Պակիստան կամրապնդի մշակույթի եւ դավանանքի ավանդական պատմական կապերը երկու պետությունների միջեւ:

Մինչդեռ, Բաքվում, Պակիստանի տնտեսության պետական նախարար Սարդար Ասիֆ Ալիի այցի ժամանակ ստորագրվեց Ադրբեջանի եւ Պակիստանի միջեւ փոխըմբռնման մասին միացյալ հուշագիր: Ստորագրվեցին նաեւ երկու երկրների երիտասարդական կազմակերպությունների եւ բուհերի միջեւ փոխանակման մասին պայմանագրերը:

Նախարարների կաբինետի մամլո ծառայությունում «ԻՏ»-ի թղթակցին հաղորդեցին, որ Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովը հուշագրի ստորագրումը գնահատել է որպես կարեւոր քայլ, որին կարող է հետեւել Ադրբեջանի պետական անկախության ճանաչումը Պակիստանի կողմից: ■

Ամերիկացի փաստաբանները Վրաստանում

ԱՄՆ-ի սենատի հանձնարարությամբ Թբիլիսի ժամանեց ամերիկացի փաստաբանների պատվիրակությունը, որը կուսումնասիրի Վրաստանում ստեղծված քաղաքական եւ տնտեսական իրավիճակը: Տեղեկանալը, որը կպատրաստի պատվիրակությունը, կքննարկի ԱՄՆ սենատը՝ Վրաստանի պետական անկախությունը ճանաչելու մասին հարցի հավանական քննարկման ժամանակ:

Նոյեմբերի 30-ին ամերիկացի փաստաբանների պատվիրակությանն ընդունեց Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան:

Պատվիրակությունը հանրապետությունում կմնա մի քանի օր: Նախատեսված է նրանց հանդիպումը Վրաստանի ընդդիմության ներկայացուցիչների հետ: ■

«Հանրապետությունը լուրջ բախումների եզրին է»

Մոլդովայի ազգային անվտանգության նախարար Անատոլի Պլյուգարուն գտնում է, որ **«հանրապետությունը լուրջ բախումների եզրին է»**: Նրա կարծիքով, հանրապետության զբաղված ադեկվատ գործունեությունն են **«Պրիդնեստրովիեի եւ Գագաուզիայի անջատողականների գործունեությունն ու Մոլդովայի ժողովրդական ճակատի բռնած դիրքը»**:

Նոյեմբերի 30-ին, ելույթ ունենալով Մոլդովայի ազգային ռադիոյով, նա ասաց, որ Պրիդնեստրովիեի զինյալ ստորաբաժանումների մարտիկների ձեռքում գտնվող զենքը ստացվել էր հիմնականում ԽՍՀՄ-ի այլ մարզերի զինծառայողներից:

Հանրապետության Ազգային անվտանգության նախարարը նշեց, որ Մոլդովայի ղեկավարությունը ձեռնարկում է բոլոր միջոցները բախումներից խուսափելու եւ խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Պլյուգարուն հաղորդեց, որ Մոլդովայի Ազգային անվտանգության նախարարությունը չի զբաղվի «լրտեսությամբ, այդ բառի դասական իմաստով»: «Ինչ վերաբերում է տնտեսական լրտեսությանը,- ասաց նա,- նախարարությունն այն կկիրառի»: ■

Մոլդովայի եւ Ռումինիայի միավորման խորհուրդ

Դեկտեմբերի 1-ին Քիշնեւում ստեղծվեց Մոլդովայի եւ Ռումինիայի միավորման խորհուրդ: Դա տեղի ունեցավ Մոլդովայի ժողովրդական ճակատի կողմնակիցների հանրահավաքի ժամանակ, որը նվիրված էր վերամիավորման 73-ամյակին, երբ Մոլդովան միացել էր Ռումինիային:

Այս կողմից, դեկտեմբերի 2-ին ելույթ ունենալով նախընտրական ժողովում՝ Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրն այդ որոշումն անվանեց ոչ իրավական: Նա հանդես եկավ անկախ եւ անբաժանելի Մոլդովայի կողմ:

Մինչդեռ **«Ունիտաս»** միջազգային շարժման հանրապետական խորհրդի նախագահությունը կոչ արեց համաքաղաքացիներին չմասնակցել դեկտեմբերի 8-ին կայանալիք նախագահի ընտրություններին: Այն մեղադրեց Միրչա Սնեգուրին, որ նա չունի սեփական դիրքորոշում հանրապետության անկախության հարցի վերաբերյալ, ավերում է տնտեսական կապերը Ուկրաինայի, Ռուսաստանի եւ այլ հանրապետությունների հետ: ■

Լուրերը՝ interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Եւրախորհրդարանը նախազգուշացնում է Թուրքիային

«Միլլիյեթ» թերթի Սրբասբուրգի թղթակից Ահմեդ Սեւերը նոյեմբերի 24-ին Ֆրանսիայից տեղեկացնում է, թե Եւրախորհրդարանը խիստ քննադատել է հյուսիսային Իրաքի քուրդ ժողովրդի դեմ Թուրքիայի գինված գործողությունները: Որոշման մեջ նշվում է, որ եթե Թուրքիան շարունակի իր զինյալ հարձակումները հյուսիսային Իրաքում գտնվող քրդերի դեմ, ապա Եւրախորհրդարանը սպիտված կլինի դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ պահանջելով պատժել Թուրքիային: Ահմեդ Սեւերը տեղեկացնում է, որ այդ որոշումն ընդունվել է Եւրախորհրդարանի «Ընկերվարական», «Քրիստոնեաժողովրդական», «Կանաչներ» եւ համայնավար անդամների կողմից եւ անվանվել է *«Հյուսիսային Իրաքի քրդերի վիճակը եւ Թուրքիայի սահմանից դուրս կատարած գործողությունները»*: Կոչ է արվում ողջ աշխարհին շտապ փույթ օգնության հասնել հյուսիսային Իրաքի: Իրանի եւ Թուրքիայի տարածքում գտնվող քրդերին: Իրաքին պատշաճ առաջարկվում է նավթից ստացված եկամտի մի մասը տրամադրել քրդերի սոցիալական իրավիճակի բարելավմանը: Առաջարկվում է նաեւ ՄԱԿ-ի զինյալ մի ջոկատ պահել շրջանում՝ քրդերի անվտանգությունն ապահովելու նպատակով: Քննադատվում են նաեւ Քրդական Բանվորական Կուսակցության՝ ՊԿԿ-ի ուժերի կողմից Թուրքիայի դեմ կատարած հարձակողական գործողությունները:

Թուրքական զրեթե բոլոր թերթերը եւ վերջերս միայն պատշաճի ձեռնադրված, ազգությամբ քուրդ արտգործնախարար Հիքմեթ Չեթինը խիստ ազդվել են այս որոշումից՝ գնահատելով այն որպես *«անարդարություն եւ բռնություն»* նորաստեղծ թուրքական կառավարության դեմ: ■

Իրաքի քրդերը մեղադրում են ՊԿԿ-ին

Քրդիստանի աշխատավորական կուսակցության զինյալ մարտիկների եւ Իրաքի քուրդ փեշմերգաների միջեւ հարաբերությունները կրկին լարված են, երբ հավատալի թուրքական Անատոլիական լրատվական գործակալությանը, որը նշում է, թե *«վերջերս ՊԿԿ զինյալները եւ իրաքյան զորքերը Իրաքում միացյալ հարձակում են կազմակերպել փեշմերգաների դեմ»*, հենվելով *«Իրաքյան Քրդիստանի ձայն»* ռադիոկայանի վրա:

Ըստ Մասուդ Բարզանիի Քրդիստանի ժողովրդավարական կուսակցության այդ ռադիոյի, Սադդամ Հուսեյնը *«ՊԿԿ-ի համար հայտարել է ամեն տեսակ զենք, որպեսզի արգելք դնեն Իրաքի հյուսիսում տեղակայված գրասիրական կազմակերպությունների ամերիկյան թիկունքներին եւ այլ պատշաճների»*: ՊԿԿ-ն բազմաթիվ անգամ դատապարտել է Իրաքի եւ Անկարայի ինքնավարության ձգտող քրդական կազմակերպությունների միջեւ Ծոցի պատերազմի օգտին տարվող բանակցությունները: Նա նույնիսկ ստիպված է եղել վերջերս տանել Թուրքիայի քրդական տարածքներում տեղակայված արեւելյան զորքերի նկատմամբ, որոնք «հովանավորում» են իրաքյան քրդերին, ինչպես նաեւ բոլոր նրանց, ովքեր կհամագործակցեն այդ զորքերի հետ, ներառյալ քուրդ փեշմերգաները:

Հենց որ Ծոցի պատերազմն ավարտվեց, եւ քրդական ապստամբությունը ճնշվեց, Անկարան որոշ չափով վերանայեց Իրաքի հյուսիսում քրդական ինքնավարությանն աջակցելու իր քաղաքականությունը: Ավելին, թուրքական ավիացիան, պատրվակ բռնելով ՊԿԿ-ի ապստամբների կողմից թուրք ոստիկանների առեւանգումը, օգոստոս ամսվանից ի վեր երեք ռազմերթ կատարեց Իրաքի հյուսիսում, ՊԿԿ-ի ճամբարների դեմ: Այս կոյր ռմբակոծումները հասկանալի վնաս պատճառեցին իրաքյան քուրդ փախստականների ճամբարներին, սառնություն մտցնելով Անկարայի եւ Իրաքի քրդերի միջեւ: ■

Զինված հարձակումներ Ստամբուլում եւ Բիթլիսում

Երկու թուրք զինվոր եւ «յոթ քաղաքային պահապան» սպանվեցին երկուշաբթի օրը քուրդ ապստամբների կողմից Ստամբուլում եւ Բիթլիսում: *«Անջատողական սահմանները»*, ըստ թուրքական Անատոլիական գործակալության, Բիթլիսի գավառի Հիասն բնակավայրի մոտ կանգնեցրել են ոստիկանության մի սպայի եւ յոթ «քաղաքի պահապանների» տեղափոխող վարք ավտոբուսը, իջեցրել նրանց եւ գնդակահարել:

ՊԿԿ-ի զինյալ մարտիկները, որոնք ընդհանրապես գործում են Թուրքիայի հարավարեւելքում, ձեռնարկել են նաեւ մի հարձակում Ստամբուլի մերձակայքում: Երկուշաբթի երեկոյան Թուրքիայում ոստիկանության շարժական մի պահակախմբի դեմ կատարված այդ զինված հարձակման ժամանակ մի զինվոր սպանվել է եւ հինգը վիրավորվել են: Թուրքական մամուլը այդ հարձակումը վերագրում է ՊԿԿ-ի Աբդուլլահ Օջալանի զինյալ մարտիկներին: ■

Քննարկվում է միութենական պայմանագրի նախագիծը

Դեկտեմբերի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանրապետությունների խորհրդում ծավալված քննարկման ժամանակ Ռուսաստանի եւ Ղազախստանի պատգամավորությունները, ընդհանուր առմամբ աջակցելով ինքնիշխան պետությունների միության մասին պայմանագրի նախագծին, հանդես եկան «Կոնֆեդերատիվ պետություն» բանաձեւի դեմ:

Ռուսաստանի պատգամավոր Սերգեյ Շախրայը հայտարարեց, թե Ռուսաստանի պատգամավորությունը գտնում է, որ Միության պահպանման գլխավոր ճանապարհը առաստական տնտեսական բարեփոխումն է:

Ղազախստանի, Տաջիկստանի եւ Թուրքմենստանի պատգամավորություններն աջակցեցին «Կոնֆեդերատիվ պետության» բանաձեւին եւ կոչ արեցին ամենամոտ ժամանակներս որոշել նրա կազմը:

Բելառուսի ներկայացուցիչ Ալեքսանդր Դովլատը անտրամաբանական անվանեց նախագծի քննարկումը ԽՍՀՄ-ի խորհրդարանում՝ առանց նախնական վավերացման հանրապետությունների խորհրդարաններում: ■

Անվտանգության եւ պաշտպանության կոմիտեների հայտարարությունը

Միութենական խորհրդարանի անվտանգության եւ պաշտպանության կոմիտեները եւ ինքնիշխան պետությունների ներկայացուցիչները հայտարարեցին, որ յուրաքանչյուր ինքնիշխան պետություն իրավունք ունի անցումային շրջանում ստեղծել սեփական զինյալ ուժեր՝ պահպանելով ընդհանուր անվտանգության սկզբունքները: Դեկտեմբերի 3-ին հրատարակված հայտարարության մեջ նշվում է, որ ռազմական անվտանգության բոլոր հարցերը պետք է լուծվեն Խորհրդային Միության միջազգային պարտավորությունների համաձայն: Այդ բոլոր հարցերը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ աշխատանքային խումբ: ■

«ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը կենսունակ է»

«ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը կենսունակ է: Այն կարող է կայունացնող հաղթական դեր խաղալ երկրում», նոյեմբերի 8-ին Կրեմլում տեղի ունեցած մամլո ասուլիսում հայտարարեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանրապետությունների խորհրդի նախագահ Անուարբեկ Ալիմժանովը: ■

Azg

semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Ս. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@